ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԴԵՊԻ ՕՐԻՆԱՎՈՐ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation

A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Մարշալի գերմանական ֆոնդի Տարածաշրջանային համագործակցության սեւծովյան հիմնադրամի ֆինանսավորմամբ: Հրապարակման մեջ արտահայտված կարծիքներն անպայման չի, որ ներկայացնեն վերոնշյալ կազմակերպությունների և նրանց գործընկերների տեսակետները:

ԴԵՊԻ ՕՐԻՆԱՎՈՐ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ծրագրի աշխատակազմ

Սոնա Այվազյան
Ղեկավար

Էդիտա Վարդգեսյան
Փորձագետ-տնտեսագետ

Լենա Նազարյան
Օգնական

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0025, Այգեստան, 9րդ փողոց, տուն 6
Հեռ.՝ +374-10-569910, 553069
Ֆաքս՝ +374-10-571399
էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am
Երևան, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 5
Կայուն զարգացման հայեցակարգ 5
Տնտեսական աճ և կայուն զարգացում 7
Հանքարդյունաբերության կայուն զարգացման սկզբունքներ 12

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 15
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն 15
AA1000 ստանդարտներ 16
Արդար աշխատանքի ասոցիացիա 16
Լավագույն կորպորացիաների ստանդարտ 17
Բնապահպանական կառավարման ISO 14000 ստանդարտ 18
Հաշվապահության և հաշվետվության միջազգային ստանդարտներ 19
Գլոբալ կոմպակտ 19
Գլոբալ հաշվետվությունների նախաձեռնություն 20

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 36
Թափանցիկ կառավարում 36
«Հրապարակի՛ր՝ ինչ մուծում ես» նախաձեռնություն 37
Հանքարդյունաբերության թափանցիկության նախաձեռնություն 38

ՀՂՈՒՄՆԵՐ 47

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳՀՆ	Գլոբալ հաշվետվությունների նախաձեռնություն
ԿՍՊ	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
ՀԱԹՆ	Հանքարդյունաբերության թափանցիկության նախաձեռնություն
ՀԻՄ	«Հրապարակիր ինչ մուծում ես» նախաձեռնություն
ՀՄՄԽ	Հանքարդյունահանման և մետաղների միջազգային խորհուրդ
ՀՆԱ	Համախառն ներքին արտադրանք
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակությունը տնտեսական զարգացման համար անհրաժեշտ բնական ռեսուրսների, այդ թվում՝ օգտակար հանածոների, անընդհատ աճող պահանջ ունի: Դա ենթադրում է հանքարդյունաբերության շարունակական ծավալում ողջ աշխարհում:

Համաշխարհային պատմական փորձը վկայում է, որ բնական պաշարների անարդյունավետ կառավարումը անխուսափելիորեն հանգեցնում է տնտեսական և սոցիալական բացասական ազդեցությունների, նպաստում աղքատության խորացմանը, խարդախության ու կոռուպցիայի տարածմանը, սոցիալական լարվածության ու հակադրությունների սրմանը: Չնայած հանքարդյունաբերությունից ստացվող հսկայական եկամուտներին՝ բնական ռեսուրսներից մեծ կախվածություն ունեցող երկրներում բնակչությունը գտնվում է խոր աղքատության մեջ:

Հանքարդյունաբերության ճյուղը հաճախ ասոցացվում է կոռուպցիայի բարձր մակարդակի հետ: Լեռնահանքային ընկերությունները, որպես կանոն, «խրված» են կոռուպցիոն գործարքների մեջ հանքարդյունաբերության ողջ ցիկլի ընթացքում՝ սկսած ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու փուլից, շարունակվելով հանքավայրի շահագործման ու ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում՝ մինչև հանքավայրի փակում: Խոշոր հանքավայրերի շահագործման մեջ հաճախ ներգրավված են լինում պետությունների ղեկավարներն ու այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Այս ոլորտում ստացվող եկամուտները չեն բացահայտվում, որոշ դեպքերում տեղեկատվությունը համարվում է պետական կամ առևտրային գաղտնիք, իսկ հաշվետվողականության բացակայությունը նպաստում է պաշտոնեական դիրքի չարաշահման միջոցով եկամուտների ապօրինի հափշտակումներին և յուրացումներին:

Ժողովրդավար և կայուն զարգացման ուղին որդեգրած պետությունների համար չափազանց կարևորվում է ընդերքի օգտակար հանածոների հայթայթման և օգտագործման ողջամիտ և ամբողջ հասարակության շահերին համապատասխանող կառավարումը, որը հնարավորություն կտա տվյալ ոլորտում ստեղծվող եկամուտներով նպաստել երկրների տնտեսական զարգացմանը և հաղթահարել աղքատությունը: Առանձնապես նշանակալի է ռեուրսների թափանցիկ կառավարումը, որը կարող է, մի կողմից, ապահովել ոլորտի կայուն զարգացման հավաստումը, մյուս կողմից, հանրային բարիք հանդիսացող ակտիվի նկատմամբ հաստատել հասարակական վերահսկողություն:

Ընդերքի օգտակար հանածոների կայուն և թափանցիկ կառավարման գործում առանցքային դերակատարում ունեն երկրների կառավարությունները, որոնք պետք է ապահովեն օրինավոր ընդերքօգտագործման համապատասխան իրավական դաշտ և օրենսդրության պատշաճ կիրարկում: Անգնահատելի է հանքարդյունաբերող ընկերությունների պատրաստակամությունը՝ ունենալ պատասխանատու բիզնես, շարունակաբար զարգանալ՝ համապատասխանեցնելով գործունեությունը միջազգայնորեն ընդունված չափանիշներին: Հատուկ գործառույթներ ունեն նաև մյուս շահագրգիռ կողմերը՝ միջազգային և տեղական ֆինանսական կառույցները, ներդրողները, հասարակական կազմակերպությունները և տեղական ինքնակառավարման մարմինները:

Սույն հրապարակումը ներկայացնում է մեր կողմից «օրինավոր» գնահատվող հանքարդյունաբերության հիմքերը՝ կայուն զարգացման, պատասխանատու բիզնեսի և թափանցիկ կառավարման սկզբունքները, որոնք մշակված են միջազգայնորեն ճանաչված ու ակտիվ տարածում գտնող նախաձեռնությունների շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունն ընդունել է կայուն զարգացման հայեցակարգը, սակայն երկրի զարգացումն իրականում ընթանում է ոչ կայուն եղանակով: Երկիրն առաջ է մղվում զարգացման մի ուղիով, որի համաձայն տնտեսական աճը և բնակչության բարեկեցությունը կախման մեջ են դրվում ընդերքօգտագործման հետագա ծավալումից: Տեղեկություններն այս ոլորտի մասին խիստ սահմանափակ են և հանրությունն, ըստ էության, իրազեկված չէ օգտակար հանածոների շահագործման պետական ծրագրերից, դրանց

արդյունավետությունից և ոլորտին առնչվող հիմնախնդիրներից: Հայաստանում ձևավորված չէ բարոյական բիզնեսի մշակույթ, և դրա համար առկա չեն համապատասխան իրավական կամ այլ նախադրյալներ: Ընդհակառակը, հանքարդյունաբերողների համար ստեղծված է բարենպաստ միջավայր անպատասխանատու բիզնես ծավալելու համար՝ ինչպես շրջակա միջավայրի աղտոտման, այնպես էլ սոցիալական ազդեցության տեսանկյունից:

Հաշվի առնելով, որ բնական պաշարների կառավարումը՝ հանուն երկրի զարգացման և դրա քաղաքացիների բարեկեցության բարձրացման, ցանկացած երկրի իշխանության առաջնակարգ պարտականությունն է, ակնկալում ենք, որ սույն նյութը կարժանանա համապատասխան պետական մարմինների ուշադրությանը և հիմք կծառայի ընդերքօգտագործման ոլորտի բարեփոխումների համար: Նաև հուսով ենք, որ այն ուղեցույց կհանդիսանա հանքարդյունաբերող ընկերությունների և այլ շահագրգիռ կողմերի համար՝ խթանելով առավել բարոյական բիզնեսի զարգացումն ու դրա նկատմամբ պատշաճ պահանջարկի ձևավորումը:

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կայուն զարգացման հայեցակարգ

Մարդկության զարգացումը տեղ է գտել մարդու՝ բնության օրենքների ճանաչման հիման վրա իշխանության հաստատման ու պահպանման շնորհիվ: Դրա ընթացքում մարդը, մի կողմից, բնության հաշվին իր համար ստեղծել է բարիք ու միաժամանակ ազատվել նրանից ունեցած կախվածությունից, մյուս կողմից, ավերել ու կործանել այդ բնությունը:

Կայուն զարգացումը՝ միանգամայն նոր գաղափարախոսություն է, որի ի հայտ գալը պայմանավորված է նրանով, որ մարդկային հասարակության պատմականորեն ձևավորված զարգացման եղանակը (տեխնոգեն զարգացում) հանդիպել է մի շարք էկոլոգիական, տնտեսական և սոցիալական բնույթի սահմանափակումների ու մտել փակուղի[1]:

էկոլոգիական սահմանափակումներ. Նախաարդյունաբերական (նախաինդուստրիալ) ժամանակաշրջանում բնական միջավայրի վերափոխումները կրում էին տեղային բնույթ և առաջին հերթին կապվում էին գյուղատնտեսական հանդամասերի ընդլայնման նպատակով անտառահատումների, էրոզիոն երևույթների զարգացման, հողերի աղակալման հետ: Արդյունաբերական հեղափոխության և գիտատեխնիկական առաջընթացի ժամանակաշրջանում էներգիայի հանածո աղբյուրների հետևանքով շրջակա միջավայրի՝ արդեն իսկ առկա ձևախեղումներին մարդն ավելացրեց նորը՝ միջավայրի վրա ֆիզիկաքիմիական ներգործությունը: Վերջինիս ինտենսիվությունը մի քանի անգամ գերազանցում է նախորդ ներգործությունները, ինչի հետևանքով շրջակա միջավայրի փոփոխությունները արդեն տեղի են ունենում մեկ սերնդի աչքի առաջ: 20-րդ դարի զարգացումների համատեքստում բնական միջավայրի դեֆորմացիաները տեղայինից վերաճել են համաշխարհային մակարդակի փոփոխությունների: էկոլոգիական սահմանափակումներն արտահայտվում են գլոբալ բնույթ ձեռք բերող էկոլոգիական ճգնաժամի ավելի ու ավելի խորացող դրսևորումներով՝ ջերմոցային էֆեկտ և կլիմայի փոփոխություններ, հողերի դեգրադացիա և անապատացում, անտառածածկ տարածքների և կենսաբազմազանության կրճատում, ընդերքի հանածոների սպառում, ջրային համակարգերի և հողերի աղտոտվածություն ծանր մետաղներով ու կայուն օրգանական նյութերով և այլն: Չափազանց սուր պրոբլեմ է դառնում ստորգետնյա ջրերի աղտոտումը, որը հանգեցնում է խմելու ջրի ճգնաժամի: Կտրուկ աճում է խոշոր աղետների և էկոլոգիական վթարների վտանգը, որը կապված է արդյունաբերական և տրանսպորտային արտանետումները մաքրող սարքավորումների ֆիզիկական ու բարոյական մաշվածքի հետ: Փաստորեն, տեղի է ունենում տնտեսության բնական հիմքի կործանում, որը, լինելով

[4] С1Н1Бобылев/А1Ш1Ходжаев ЎЭкономика природопользования î+М”…¶></4<<:,с1::0;31

տնտեսական գործունեության արդյունք, իր հերթին, ի վերջո, սահմանափակում է տնտեսական աճը:

Տնտեսական (ներդրումային) սահմանափակումներ. Տեխնոգեն, բնատար (բնական ռեսուրսների գերշահագործման և դրանց աճող ծավալների ներգրավման վրա հիմնված) զարգացումը խթանելու համար անհրաժեշտ է ավելի ու ավելի շատ միջոցներ հատկացնել բնությունը շահագործող ճյուղերին, այդ թվում և առաջին հերթին՝ հանքարդյունաբերությանը: Բնական ռեսուրսների՝ հողերի, ջրերի, օդի և այլ ռեսուրսների աղտոտումը, դեգրադացիան ու սպառումը պահանջում են նոր ռեսուրսների մշակման և մնացածների շահագործման համար հսկայական կապիտալ ներդրումներ: Տարեցտարի այդ ծախսերն աճում են (ուղղակիորեն կամ տնտեսության մեջ այլ ներդրումների համեմատությամբ), սակայն դրանց արդյունավետությունն անընդհատ ընկնում է: Ակնհայտ է, որ տնտեսական զարգացման այդպիսի տիպի դեպքում բնական ռեսուրսների շահագործման և հանույթի ծավալները, ինչպես նաև դրանց հիման վրա ստացվող պատրաստի արտադրանքը նախկին մակարդակի վրա պահելու համար ավելի շատ միջոցներ են պահանջվում: Ֆինանսական միջոցների նկատմամբ աճող պահանջարկի բավարարման անհնարինությունը հանգեցնում է ֆինանսական և տնտեսական ճգնաժամի:

Սոցիալական սահմանափակումներ. Տնտեսական զարգացման ձևավորված տեխնոգեն, բնատար տիպը տնտեսական և էկոլոգիական սահմանափակումների հետ մեկտեղ, հեռանկարում փակուղային է նաև զուտ սոցիալական պատճառներով: Շրջակա միջավայրի աղտոտմամբ պայմանավորված՝ կենսական միջավայրի՝ մթնոլորտային օդի, ջրի, սննդամթերքների որակական հատկանիշների վատթարացումը անխուսափելիորեն հանգեցնում է բնակչության մահացությունների թվի աճին, առողջության վատթարացմանն ու էկոլոգիական բնույթի հիվանդությունների թվի աճին, մարդկանց աշխատունակության անկմանը և որպես հետևանք՝ եկամուտների կրճատմանն ու բարեկեցության մակարդակի անկմանը: Իրական է դարձել մարդու գենոֆոնդի փոփոխության և որպես կենսաբանական տեսակ վերանալու վտանգը:

1960-ականներից ի վեր կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, կատարվել վերլուծություններ և մշակվել առաջարկություններ մարդկության հետագա զարգացման համար վերոհիշյալ սահմանափակումների հաղթահարման ուղիների կապակցությամբ: Դրանք, ի վերջո, հանգեցրել են մարդկային պահանջմունքների բավարարման մի նոր, արմատապես տարբերվող եղանակի գաղափարին, որն անվանվել է «կայուն զարգացում»: Այս հասկացությունը սահմանվել է ՄԱԿ-ի հանձնարարությամբ ձևավորված Շրջակա միջավայրի և զարգացման միջազգային հանձնաժողովի կողմից 1987 թ.-ին որպես զարգացում, «որը թույլ է տալիս բավարարել ներկա սերնդի կարիքները՝ չսահմանափակելով հետագա սերունդների հնարավորությունները՝ բավարարելու իրենց կարիքները»: Այլ կերպ ասած՝ այսօրվա սերունդը պետք է այնպես օգտվի բնական ռեսուրսներից ու բնական բարիքներից, որ տասնամյակներ և հարյուրամյակներ հետո եկող սերունդները նույնպես իրենց նյութական կարիքները բավարարելու համար ունենան պղինձ, մոլիբդեն, ոսկի, անտառափայտ, ջուր, բերրի հող և այլն, ինչպես նաև մեզանից ժառանգեն հարուստ անտառներ, մաքուր ջրավազաններ և այլ բնական էկոհամակարգեր՝ իրենց առողջապահական, գեղագիտական, բարոյական պահանջմունքները բավարարելու համար: Կայուն զարգացման հիմնադրույթը զարգացել և իր վերջնական ձևակերպումն է ստացել 1992 թվականին Ռիո-դե-Ժանեյրոյի միջազգային գագաթաժողովում: Զարգացման այս ուղին պաշտոնապես որդեգրել են աշխարհի բազմաթիվ պետություններ, այդ թվում՝ Հայաստանը:

Կայուն զարգացումն իրենից ներկայացնում է հասարակության և տնտեսության զարգացման այնպիսի եղանակ, որով ապահովվում է հետևյալ բաղադրիչների պահպանումն ու վերարտադրությունը՝

- Բնական կապիտալ, որը բոլոր բնական ռեսուրսների, այդ թվում՝ ընդերքի օգտակար հանածոների ամբողջությունն է
- Արհեստական կապիտալ, այսինքն՝ մարդու կողմից ստեղծված բարիքները՝ սպառողական ապրանքները, շինությունները, ենթակառուցվածքները և շրջակա

միջավայրի արհեստական օբյեկտները (օրինակ՝ արհեստական լճեր, ջրամբարներ, տնկարկներ և այլն)
- Մարդկային կապիտալ, որը ենթադրում է անհատների առողջությունը, բարեկեցությունը և հոգևոր բավարարվածությունը
- Սոցիալական կապիտալ, որն ընդգրկում է հասարակության տարբեր խմբերի և խավերի միջև հարաբերությունները կարգավորող նորմերն ու կառույցները:

Կայուն զարգացման խնդիրներն են՝

- բարձրացնել ամբողջ հասարակության և նրա անդամների բարեկեցությունը այնպիսի եղանակներով, որոնք կերաշխավորեն նաև ապագա սերունդների բարեկեցությունը
- ապահովել ներսերնդային և միջսերնդային իրավահավասարությունը
- պահպանել կենսաբազմազանությունը և էկոլոգիական գործընթացներն ու կենսաապահովման էկոհամակարգերը:

Կայուն զարգացման հայեցակարգն անհրաժեշտ է համարում պահպանել մարդկության կենսագործունեության պատմականորեն ձևավորված միջավայրը, բայց, միևնույն ժամանակ, համաշխարհային զարգացման նախկին միտումները դիտարկվում են որպես անկայուն զարգացման մոդելներ: Կայուն զարգացման համատեքստում կարևորվում են, այսպես կոչված, «հակաաճային» միտումները. այսինքն՝ «զարգացում» ասելով հասկացվում է ոչ թե ապրանքների, ծառայությունների և այլնի սոսկ քանակական աճը, այլ այդ աճն ապահովող եղանակների արմատական վերանայումը: Կայուն զարգացումը կարելի է ներկայացնել որպես հասարակության առջև ծառացած տնտեսական աճի առավելագույնացման (մաքսիմիզացման) խնդիր, սակայն ոչ թե «ամեն գնով», այլ սոցիալական բարեկեցությունը առավելագույնի և շրջակա միջավայրին[2] հասցվող վնասը՝ նվազագույնի հասցնելու պայմանով:

Տնտեսական աճ և կայուն զարգացում

Ո՞րն է կայուն զարգացման յուրահատկությունը, ինչո՞վ է այն տարբերվում մարդկային հասարակության՝ մինչ այժմ ունեցած տնտեսական և սոցիալական առաջընթացից: Որո՞նք են այն չափանիշները, որոնք թույլ կտան որոշել, թե արդյոք երկիրն ընթանու՞մ է կայուն զարգացման ուղիով, թե ինքնաբավ շարունակում է տնտեսությունը վարել տեխնոգեն, բնակործանարար եղանակներով: Որքանո՞վ է տնտեսական աճը կայուն զարգացման ցուցանիշ:

Ընդհանուր առմամբ, այն պահից, երբ մարդը սկսել է զբաղվել տնտեսական գործունեությամբ, բոլոր երկրներում համախառն ներքին արտադրանքն (ՀՆԱ) աճել է թե՛ բացարձակ մեծությամբ և թե՛ մեկ շնչի հաշվով: Սակայն ՀՆԱ-ն չի արտացոլում, թե ինչպես է ընթացիկ տնտեսական գործունեությունն անդրադառնում շրջակա միջավայրի վրա, սպառում բնական ռեսուրսները, աղտոտում շրջակա միջավայրը և նվազեցնում ապագայում նյութական և այլ բարիքներ ստեղծելու հնարավորությունները: Այն չի արտացոլում շրջակա միջավայրի որակից սոցիալական բարեկեցության ուղիղ համեմատական կախվածությունը[3]: Սովորաբար, բնակչության բարեկեցության առավել ճշգրիտ պատկերը ստանալու նպատակով ՀՆԱ-ի կազմից հանվում է կապիտալի սպառումը (հիմնական արտադրական ֆոնդերի մաշվածքը), սակայն երբ անտառ է հատվում, հողեր են ենթարկվում էրոզիայի կամ չվերականգնվող հանքային ռեսուրսներ են սպառվում, նման հանրահաշվական գործողություն ՀՆԱ-ի հետ չի իրականացվում: Բնական կապիտալի և արտադրական կապիտալի նկատմամբ այդպիսի տարբերակված մոտեցումը «տնտեսության և բնության միջև առաջացնում է սխալ հարաբերակցություն, որը թույլ է տալիս որոշում կայացնողներին անտեսել կամ կործանել բնությունը՝ հանուն տնտեսական «զարգացման», ինչը

[2] Այսուհետ շրջակա միջավայր ասելով հասկանալու ենք բնական ռեսուրսների, բարիքների, էկոհամակարգերի ամբողջությունը ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանության տեսանկյունից:
[3] J.R Kahn, *The Economic Approach to Environmental and Natural Resources* (Orlando, The Dryden Press, 1998), pp.134, 459.

եկամուտների ներքո քողարկում է արժեքավոր բարիքների կործանումը: Այդպիսով, խրախուսվում և գործի է դրվում այն գաղափարը, որ տնտեսական աճի արագ տեմպերը թույլատրելի է նվաճել ռեսուրսային բազայի շահագործման ճանապարհով: Արդյունքը կլինի թվացյալ աճը և բարեկեցության անընդհատ անկումը»[4]:

Փաստորեն, ՀՆԱ-ի կիրառումը որպես հասարակության կյանքի որակը բնութագրող ցուցանիշ անթույլատրելի է վերջինիս անկատար լինելու պատճառով: Որպեսզի ՀՆԱ-ն հնարավոր լինի կիրառել որպես սոցիալական բարեկեցության մակարդակը և նրա աճը բնութագրող ցուցանիշ, այն պետք է նախապես ճշգրտված լինի այսպես կոչված «կանաչ» գործոնով[5]: Հաշվառման մեթոդներից մեկը բնական կապիտալի մաշվածքի հաշվառումն է ՀՆԱ-ի մեջ՝ հիմնական արտադրական ֆոնդերի մաշվածքի օրինակով: Դա կարող է զգալիորեն փոփոխել ՀՆԱ-ի դինամիկայի պատկերը: Այսպես, օրինակ՝ Ռեպետտոյի խմբի կողմից իրականացված՝ Ինդոնեզիայի ՀՆԱ-ի վերահաշվարկը ճշգրտված անտառահատման, հողերի էրոզիայի և նավթի պաշարների սպառման հետևանքով առաջացած կորուստներով, ցույց է տվել, որ արձանագրված 7,1% տարեկան աճը իրականում կազմում է ընդամենը 4%[6]:

Ըստ տնտեսագետներ Դալիի, Պեսկինի և Ռեպետտոյի՝ «…այն դեպքերում, երբ մակրոտնտեսական քաղաքականությունն ուղղված է միայն ՀՆԱ-ի աճը խթանելուն՝ անտեսելով շրջակա միջավայրի վրա դրա ազդեցությունը, հետագայում բերում է աղետալի հետևանքների»[7]: Երբ մակրոտնտեսական քաղաքականության համար առաջնային խնդիր է համարվում ընթացիկ ՀՆԱ-ի աճը, բնական կապիտալի ներգրավման ծավալներն անխուսափելիորեն ընդլայնվում են՝ վերաբաշխելով դրա ավելի ու ավելի մեծ բաժինը ներկա սերունդների օգտին և կրճատելով ապագա սերունդների բարեկեցությունը ապահովելու հնարավորությունները: Լինելով արդիական անգամ տնտեսապես և սոցիալապես բարեկեցիկ արևմտյան երկրների համար՝ այս խնդիրն առավել սուր է զարգացող երկրներում, որտեղ տնտեսական աճի խթանման անհրաժեշտությունը համարվում է հրատապ և դառնում պատրվակ բնական ռեսուրսների գերշահագործման համար: Անկասկած, ավելի հեշտ ու գայթակղիչ է բնությունից վերցնել բնական բարիքներ և արտահանել դրանք, քան վերակառուցել տնտեսությունն այնպես, որ հնարավոր լինի միավոր ռեսուրսից ստանալ ավելի բարձր արդյունք:

Որպեսզի հասկանանք, թե որքանով է ՀՆԱ-ն արտացոլում տվյալ երկրի կայուն զարգացման ուղիով ընթացքը, հարկ է վերլուծել, թե ո՞րն է ՀՆԱ-ի աճի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և, փոխադարձաբար, ի՞նչ ազդեցություն ունի շրջակա միջավայրի որակը ՀՆԱ-ի աճի վրա: Մյուս կողմից, անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսին է շրջակա միջավայրի ու մակրոտնտեսական աճի նման փոխազդեցության հետևանքը սոցիալական բարեկեցության համար: Ստորև բերված են այն չափանիշները, որոնք թույլ են տալիս եզրահանգումներ անել, թե որքանով է երկրի զարգացումը համապատասխանում կայուն զարգացման պահանջներին:

1. Երկրի տնտեսության կառուցվածքը և նրա վերակառուցման դինամիկան (կամ դրա բացակայությունը). Եթե երկրի ՀՆԱ-ի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն բնօգտագործող, բնաշահագործող ճյուղերը (օրինակ՝ հանքարդյունահանումը, բնափայտի մշակումը, էքստենսիվ գյուղատնտեսությունը, բնական ջրավազաններում որսի վրա հիմնված սննդարդյունաբերությունը), և դրանց դինամիկան չի փոփոխվում՝ ՀՆԱ-ում դրանց տեսակարար կշիռների կրճատման, ինչպես նաև՝ նշված ոլորտներ ուղղվող ֆինանսական ներդրումների ծավալի ու երկրի տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր

[4] R. Repetto, *Wasting Assets: Natural Resources in the National Income and Product Accounts* (Washington, World Resources Institute, 1989) p.154 և J.R Kahn, p. 143.

[5] Գրականության մեջ առաջարկվում են և արտասահմանյան պրակտիկայում արդեն կիրառվում են ՀՆԱ-ի ճշգրտման բազմաթիվ մեթոդներ, ինչպիսիք են Մարդկային զարգացման ինդեքսը, Կայուն սոցիալական բարեկեցության ինդեքսը և այլն, որոնց մանրամասն քննարկումը սույն հոդվածի շրջանակներից դուրս է:

[6] R. Repetto, p.138.

[7] H. E. Daly, *The Economics of Biophisical Equilibrium and Moral Growth* (San Francisco, Freeman, 1977) p. 214, H.M. Peskin, „A National Accounting Framework for Environmental Assets,“ *Journal of Environmental Economics and Management*, Issue 2 (1976), pp. 255- 262, R. Repetto, p.139.

ծավալի մեջ դրանց տեսակարար կշիռների նվազեցման ուղղությամբ, այդպիսի տնտեսական զարգացումը չի կարող համարվել կայուն:

Արդյունահանող և վերամշակող ճյուղերի միջև ողջամիտ համամասնության խախտումը հանգեցնում է բազմաթիվ բացասական ազդեցությունների՝ հանքավայրերի արագացված սպառում, բնական ներուժի մի մասի կորուստ և այլն: Արդյունահանման ճյուղերին զարկ տալը թույլ չի տալիս անհրաժեշտ արտադրական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսներն օգտագործել ռեսուրսապահպանող արտադրություններում ու սպառման ոլորտում: Սննդի, թեթև, մեքենաշինական, քիմիական և այլ արտադրությունները թերսնվում են ներդրումների առումով և անմրցունակ են դառնում արտասահմանյան արտադրողների համեմատ, ինչը հանգեցնում է տնտեսության կառուցվածքային և ֆինանսական ճգնաժամի: Միակ լուծումը տնտեսության աստիճանաբար վերակառուցումն է՝ ռացիոնալ կերպով զուգակցելով արդյունահանման, վերամշակման և սպառման մեջ կատարվող ներդրումների համամասնությունը, խուսափելով ներդրումներ կատարել առավել ևս այնպիսի հանքավայրերի մեջ, որոնց յուրացումը կապված է մեծածավալ արտաքին ազդեցությունների (օրինակ՝ անտառների կորստի, ջրային ռեսուրսների չորացման ու աղտոտման, հողերի էրոզիայի, կենսաբազմազանության ոչնչացման) հետ, որոնք էլ ավելի են մեծացնում արտաքին (էքստերնալ) ծախսերը[8]:

Կայուն զարգացման ուղի նախընտրած երկրում առաջին հերթին պետք է աստիճանաբար իրականացվեն տնտեսության կառուցվածքային փոփոխություններ՝ միտված ֆինանսական, նյութական և աշխատանքային ռեսուրսների վերաբաշխմանն՝ հօգուտ վերամշակող և ռեսուրսապահպանող ճյուղերի՝ կրճատելով բնական ռեսուրսներ հայթայթող ոլորտների տեսակարար կշիռը: Կառուցվածքային այդպիսի փոփոխությունը թույլ կտա, մի կողմից, իջեցնել երկրում արտադրվող արտադրանքի բնատարողությունը[9] և, մյուս կողմից, թեթևացնել շրջակա միջավայրի վրա ծանրաբեռնվածությունը[10]:

Մեջբերում 1. Հասարակական օգտակարության տեսանկյունից հանքարդյունահանման «օգուտների» թվացյալ լինելը

Հանքային հումքի արդյունահանման այսօրվա օգուտների հասարակական օգտակարության տեսանկյունից թվացյալ լինելը ցույց տալու համար դիտարկենք հետևյալ օրինակը. ենթադրենք եղած K ներդրումները բաժանվում են երկու մասի՝ K^1 - վերամշակող ճյուղերին և K^2- հանքարդյունահանմանը, ընդ որում՝ ներդրումների բաշխման հեռանկարային ազդեցությունը անտեսվում է, այսինքն՝ խոսքը գնում է ստատիկ խնդրի լուծման մասին: Արդյունահանման ծավալը՝ R կախված է K^2-ից, իսկ հասարակության սպառման նպատակային ֆունկցիան առավելագույնացվում է բոլոր դրական R և K^1 համար՝

$$u\left(R, K^1\right) \to \max \qquad (1)$$

$$R \le R_0 + V\left(K^2\right) \qquad (2)$$

$$K^1 + K^2 \langle K \qquad (3)$$

$$R \ge 0,\ K^1 \ge 0,\ K^2 \ge 0 \qquad (4)$$

որտեղ R_0՝ արդյունահանման սկզբնական ծավալն է, իսկ $V\left(K^2\right)$՝ արդյունահանման ծավալի աճի ֆունկցիան՝ կախված արդյունահանման մեջ կատարվող K^2 ներդրումների ծավալից: Օպտիմալության պայմանից կատարելով պարզագույն մաթեմատիկական վերափոխումներ ստանում ենք՝

[8] Հայաստանում նման նախաձեռնության օրինակ է հանդիսանում Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործումը:

[9] Նկատի ունենք ՀՆԱ-ի միավորին ընկնող բնական ռեսուրսների՝ մետաղների, էներգիայի, ջրի, հողի և այլնի ծախսը:

[10] Նկատի ունենք հանքավայրերի մշակման հետ կապված բնական համալիրներին և բնական ռեսուրսներին հասցվող վնասը անտառների հատման, մթնոլորտի և ջրավազանների աղտոտումների, հողերի օտարեցման, կենսաբազմազանության կրճատման և այլնի տեսքով:

$$\frac{\dfrac{\partial u\left(R,K^1\right)}{\partial K^1}}{\dfrac{\partial u\left(R,K^1\right)}{\partial R}}=\frac{\partial u\left(K^2\right)}{\partial K^2} \qquad (5)$$

կամ

$$\frac{\partial R}{\partial K^1}=\frac{\partial V\left(K^2\right)}{\partial K^2} \qquad (6)$$

Այստեղից հետևում է այն կարևոր եզրակացությունը, որ սպառման առավելագույն էֆեկտի ստացման տեսանկյունից, օպտիմալ վիճակում, հանքային հումքի արդյունահանման վերամշակող արդյունաբերության մեջ ներդրումներով փոխարինման նորման հավասար է արդյունահանման մեջ ներդրումների սահմանային հատույցին: Փոխակերպելով (5) արտահայտությունը և ենթադրելով, որ $\frac{\partial u\left(R,K^1\right)}{\partial R}$- p_k հանքային հումքի գնահատականն է, ապա ստանում ենք՝

$$\frac{\partial u\left(R,K^1\right)}{\partial K_1}=\frac{\partial V\left(K^2\right)}{\partial K^2} \qquad (7)$$

ինչը նշանակում է, որ հասարակական օգտակարությունն աճում է արդյունահանող ճյուղերի մեջ ֆինանսական ներդրումների աճի դեպքում: Սակայն եթե խնդիրը դիտարկենք դինամիկ ասպեկտով, այսինքն՝ հաշվի առնենք ժամանակի գործոնը և, հետևաբար, հեռանկարի համար հետևանքները, ապա, հաշվի առնելով, որ հանքային հումքը, այդ թվում՝ պղինձն ու մոլիբդենը, չվերականգնվող ռեսուրսներ են և, այդ իմաստով, ունեն սահմանափակ պաշարներ, տվյալ մոդելը փոխակերպվում է հետևյալին՝

$$u\left(R_t,K_t^{\,1}\right)\left(1+E\right)^{-t}\rightarrow \max \qquad (8)$$

$$R_t\le R_{t-1}+V_t\left(K_t^{\,2}\right) \qquad (9)$$

$$K_t^{\,1}+K_t^{\,2}\le K \qquad (10)$$

$$\sum_{t=0}^{T}V_t\left(K_t^{\,2}\right)\le V \qquad (11)$$

$$R_t\ge 0,\ K_t^{\,1}\ge 0,\ K_t^{\,2}\ge 0,\quad \left(\forall t\in\left[0,T\right]\right) \qquad (12)$$

որտեղ V -ն՝ պաշարի սահմանափակումն է, իսկ E -ն՝ դիսկոնտավորման գործակիցը:

Եթե $\lambda_1,\lambda_2,\lambda_3$ (9)-(11) արտահայտությունների երկակի փոփոխականներն են, ապա վերափոխումներից հետո կունենանք՝

$$\frac{\partial u\left(R_{t,}K_t^{\,1}\right)}{\partial K_t^{\,1}}=\left\{\frac{\partial u\left(R_t,K_t^{\,1}\right)}{\partial R_t^{\,1}}-\lambda_3\left(1+E\right)^t\right\}\frac{\partial V_t\left(K_t^{\,2}\right)}{\partial K_t^{\,2}} \qquad (13)$$

Եթե դինամիկայում սահմանափակում չկա և $\lambda_3=0$, ապա խնդիրը բերվում է նախորդ խնդրին, այսինքն նորից դառնում է ստատիկ իրավիճակ՝ համապատասխան եզրահանգումով: Իսկ երբ (11) սահմանափակումը կատարվում է և $\lambda_3\rangle 0$, արդյունահանման և վերամշակման մեջ ֆինանսական ներդրումների մասնավոր հատույցների տարբերությունը հավասար է դինամիկ սահմանափակման գնահատականին՝

$$\lambda_3\left(1+E\right)^t\frac{\partial V_t\left(K_t^{\,2}\right)}{\partial K_t^{\,2}} \qquad (14)$$

Դա նշանակում է, որ արդյունահանման և վերամշակման մեջ ներդրումների համամասնությունները պետք է տեղաշարժվեն դեպի վերամշակման ոլորտ, որպեսզի ապահովվի դրանց առավել բարձր արդյունավետությունը և հասարակական օգտակարությունը: Եթե լրացուցիչ հաշվի առնենք էկոլոգիական գործոնը, որը հանքարդյունահանման ժամանակ անխուսափելիորեն առաջացնում է արտաքին (էքստերնալ) ծախսեր, ապա արդյունահանող և վերամշակող ճյուղերի ներդրումների ծավալների միջև հարաբերակցության փոփոխությունն էլ ավելի պետք է տեղաշարժվի հօգուտ վերամշակող ճյուղերի մեջ ներդրումներ կատարելու նպատակահարմարության:

2. *Տնտեսության կառուցվածքային պատկերի հետ սերտորեն կապված՝ երկրի արտահանման քաղաքականությունը և արտահանման-ներմուծման կառուցվածքի վերափոխման միտումները.* Այստեղ մեծ կարևորություն ունեն այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են արտահանման ծավալներում արդյունահանող և վերամշակող ճյուղերի տեսակարար կշիռները և արտահանված հանքային հումքի տեսակարար կշիռը արդյունահանման ընդհանուր ծավալում:

Բնական ռեսուրսների հաշվին ծավալվող արտահանումը նշանակում է արդյունահանող և վերամշակող ճյուղերի միջև եղած անհավասարակշռության ավելի խորացում, քանի որ հանքային հումքի արտահանման աճը խթանում է արդյունահանման ծավալների ավելացումը, ինչն, իր հերթին, հանգեցնում է նոր հանքավայրերի յուրացման ու հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների ծավալի մեծացման անհրաժեշտության: Աճում է տնտեսության ծախսատարությունը, քանի որ հարուստ և համեմատաբար քիչ ծախսատար հանքավայրերն աստիճանաբար սպառվում են, և նոր հանքավայրերի շահագործման միտումը տանում է դեպի ոչ հարուստ ու ավելի ծախսատարների յուրացում: Օգտակար բաղադրատարրերի սահմանագծային պարունակության կրճատման պատճառով ավելի ու ավելի շատ միջոցների կարիք է զգացվում՝ հարստացնելու արդյունահանվող հումքը: Նաև առաջանում են սոցիալական ու էկոլոգիական արտաքին (էքստերնալ) ծախսեր, քանի որ ռեսուրսային բազան տեղաշարժվում է դեպի բարդ սոցիալական խնդիրներ ունեցող, ենթակառուցվածքներից զուրկ և էկոլոգիապես խոցելի տարածքներ: Բացի այդ, առաջնային հումք արտահանելով՝ երկիրը կորցնում է միլիոնավոր դոլարներ ավելացված արժեքի չհաշվարկման պատճառով[11]: Մյուս կողմից, երկրի տնտեսությունն ընկնում է կախվածության մեջ միջազգային շուկայի կոնյուկտուրայից և հումքային ռեսուրսների գներից:

Մեջբերում 2. Համաշխարհային հումքային գներից կախվածությունը

Համաշխարհային հումքային գներից այդպիսի կախվածությունը բացի ակնհայտ և հասկանալի անցանկալիությունից, ուղղակիորեն անդրադառնում է հանքավայրերի արդյունավետության անկման վրա՝ չստացված դինամիկ ռենտայի տեսքով հետևյալ կերպ. հանքային հումքի արժեքավորությունը որոշվում է նրա օգտագործումից ստացված եկամուտների ու արդյունահանման ծախսերի միջև տարբերությամբ և ժամանակի մեջ աճում է (1 + E) տեմպերով: Իսկ ինչպե՞ս է պահում իրեն շուկայական գինը: Այն կարող է ավելի դանդաղ աճել. ամեն ինչ կախված է սահմանային ծախսերի ֆունկցիայի տեսքից: Գինը **t** տարում, որը հավասար է ռեսուրսի սպառումից ստացված սահմանային $\frac{\partial U(C_t)}{\partial C_t}$ եկամտին, հավասար է ռեսուրսի $(1 + E)^t$ գնահատման և նրա արդյունահանման սահմանային ծախսերի գումարին: Այդ գինն աճում է դիսկոնտին հավասար տեմպերով միայն այն դեպքում, երբ սահմանային ծախսերը գծային են: Հոթելլինգի մոդելի մեջ արդյունահանման ծավալներից կախված արդյունահանման ծախսերի ֆունկցիաները մտցնելու դեպքում հանքային հումքի գնաճը դիսկոնտի աճից ցածր է, քանի որ նշված օրինաչափությանը գումարվում են ընթացիկ ծախսերի փոփոխության օրինաչափությունները: Ժամանակի ինչ-որ t պահին գինը, հասնելով որոշակի մակարդակի, կարող է կայունանալ և անգամ իջնել, ասենք՝ շուկայում առաջարկի աճի կամ փոխարինիչի հայտնվելու հետևանքով: Այս դեպքում այլընտրանք է առաջանում. ստիպված վաճառել ռեսուրսը կրճատված պահանջարկին համապատասխանող ցածր գնով, ինչը վաճառքից եկամուտների կորուստների է բերում, կամ դադարեցնել հումքի արդյունահանումը մինչև հարմար գնային պահը, ինչը հանքավայրի արդյունավետության անկում է նշանակում:

Կայուն զարգացող երկրում հանքարդյունահանման ծրագրերը պետք է թույլատրվեն միայն միջժամանակային (միջսերնդային) բաշխման օպտիմալության խնդրի լուծման հիման վրա՝ ապահովելու չվերականգնվող ռեսուրսների արդարացի օպտիմալ բաշխումը սերունդների միջև: Ֆինանսական ներդրումների նկատմամբ հատկապես բարձր պահանջարկի ժամանակաշրջաններում և ներդրումային անհամաչափ ծանրաբեռնվածության դեպքում պետք է սահմանափակվել եղած հանքավայրերի

[11] Սա, մասնավորապես, վերաբերում է նաև Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրից ստացվող խտանյութի արտահանմանը:

շահագործմամբ և խուսափել խոշոր ներդրումներ պահանջող ու մեծածավալ էկոլոգիական վնասների հանգեցնող նոր հանքավայրերի յուրացումից:

3. Ռեսուրսների օգտագործման և պահպանության միտումները. Վերականգնվող ռեսուրսների՝ հողի, ջրի, անտառների օգտագործման տեմպերը չպետք է գերազանցեն դրանց վերականգնման տեմպերին: Չվերականգնվող ռեսուրսների՝ օգտակար հանածոների սպառման տեմպերը չպետք է գերազանցեն դրանց փոխարինիչների ստեղծման տեմպերին: Ռեկրեացիոն ռեսուրսները, այդ թվում՝ հազվադեպ կենդանական ու բուսական կենսատեսակները, պետք է պահպանված լինեն հետագայում առկա լինելու պայմանով:

Հանքարդյունաբերության կայուն զարգացման սկզբունքներ

Հանքարդյունահանման զարգացման հեռանկարները սերտորեն կապված են կայուն զարգացման գաղափարի հետ: Ըստ այդմ, տվյալ ոլորտի ծավալման շարժիչ ուժը պետք է դառնա «ներկա սերնդի կարիքների բավարարումը՝ չսահմանափակելով հետագա սերունդների հնարավորությունները՝ բավարարելու իրենց կարիքները» գաղափարը: Հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման հայեցակարգի կիրառումը ենթադրում է, որ ներդրումները պետք է լինեն ֆինանսապես շահավետ, տեխնիկապես իրագործելի, սոցիալապես բարենպաստ և էկոլոգիական տեսանկյունից ընդունելի: Զարգացման կայուն եղանակը պետք է վերաբերի հանքարդյունահանման բոլոր փուլերին՝ պլանավորումից և նախապատրաստումից մինչև շինարարություն, արդյունահանում, հանքի փակում ու հետնախագծային հսկողություն:

Հանքարդյունաբերության կայուն զարգացման ապահովման նպատակով 2001 թ.-ին ստեղծվել է Հանքարդյունահանման և մետաղների միջազգային խորհուրդը՝ ՀՄՄԽ (International Council on Mining and Metals - ICMM)[12]: 2003 թ.-ին այն հռչակել է կայուն զարգացման 10 սկզբունքները,[13] որոնք ընդունվել են անդամների կողմից[14]: «ՀՄՄԽ կայուն զարգացման շրջանակ. Տասը սկզբունքներ» փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ ՀՄՄԽ անդամներ հանդիսացող կամ պարտավորություններն ընդունող հանքարդյունահանող ընկերությունները պարտավորվում են իրենց գործունեությունը ծավալել կայուն զարգացման գաղափարին համահունչ՝ առաջնորդվելով հետևյալ սկզբունքներով.

1. *Մշակել և կիրառել տնտեսական գործունեության բարոյական նորմեր և կորպորատիվ համատեղ կառավարման համապատասխան համակարգեր.*
   - մշակել և կիրառել ընկերության գործունեության պարտադիր բարոյական կանոնակարգ
   - իրականացնել հակակոռուպցիոն քաղաքականություն
   - գործունեությունը ծավալել բացառապես երկրի օրենսդրական դաշտում
   - վարել արդյունավետ քաղաքականություն կայուն զարգացման ազգային ռազմավարության մեջ հանքարդյունաբերության ոլորտի ներգրավման և կայուն զարգացման գործընթացին ոլորտի օժանդակության ուղղությամբ, մասնավորապես, համագործակցել կառավարության, ոլորտի կառավարման մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ համապատասխան օրենքների, ենթաօրենսդրական և այլ իրավական ակտերի մշակման ու ընդունման գործում:

[12] Տես՝ http://www.icmm.com.
[13] Տես՝ http://www.icmm.com/our-work/sustainable-development-framework/10-principles.
[14] Ներկայումս ՀՄԽԽ կազմում կան 18 հանքարդյունաբերական ընկերություններ և 30 ազգային ու տարածաշրջանային հանքարդյունաբերական ասոցիացիաներ:

2. *Ինտեգրել կայուն զարգացման դրույթները կորպորատիվ որոշումների կայացման գործընթացների մեջ.*
   - ինտեգրել կայուն զարգացման սկզբունքները ընկերության ռազմավարությունների և քաղաքականության մեջ
   - պլանավորել, նախագծել, գործել և գործողություններն ավարտել կայուն զարգացմանը ներդաշնակ եղանակներով
   - ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը տնտեսական, սոցիալական և բնապահպանական հարցերի լուծման գործում
   - խրախուսել ընկերության գործընկերներին և մատակարար կազմակերպություններին՝ նույնպես գործելու կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան
   - իրականացնել ընկերության աշխատող անձնակազմի, ինչպես նաև հանքարդյունաբերական կապալառու կազմակերպության անձնակազմի կայուն զարգացման դասընթացներ՝ բարձրացնելու վերջիններիս իրազեկումն ու մասնագիտական մակարդակը
   - աջակցել հանքարդյունահանման ոլորտում բաց մրցակցային շուկայի և հակամենաշնորհային քաղաքականության իրականացմանը:

3. *Պաշտպանել մարդու հիմնարար իրավունքները և հարգել ընկերության աշխատողների ու այլ ազդակիր մարդկանց ավանդույթները, մշակութային և այլ արժեքները.*
   - ապահովել աշխատանքի արդար վարձատրություն և ընդունելի աշխատանքային պայմաններ բոլոր աշխատողների համար, բացառել ստիպողական աշխատանքի կամ երեխաների շահագործումը
   - ապահովել աշխատողների ներգրավվածությունը ընդհանուր խնդիրների լուծմանը
   - իրականացնել ոտնձգություններն ու անարդարացի տարբերակված մոտեցումները բացառող քաղաքականություն գործունեության բոլոր բնագավառներում
   - ապահովել աշխատանքային անձնակազմի, այդ թվում՝ անվտանգության ծառայության աշխատողների ուսուցանում մարդու իրավունքներին նվիրված դասընթացների և համապատասխան ուղեցույցների միջոցով
   - նվազագույնի հասցնել ոչ կամավոր տարաբնակեցումը, ինչպես նաև ապահովել ազդակիր կողմերի արդար փոխհատուցումը
   - հարգել ազդակիր համայնքների բնակիչների մշակութային և այլ ավանդույթները
   - երաշխավորել ազգային փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի՝ արտադրություններում ներգրավված լինելու հավասար և արդար հնարավորություններ:

4. *Իրականացնել ռիսկի կառավարման ռազմավարություն՝ հիմնվելով ստույգ տվյալների վրա.*
   - բանակցել շահագրգիռ և ազդակիր կողմերի հետ ընկերության գործողություններին առնչվող բոլոր սոցիալական, առողջապահական, անվտանգության, բնապահպանական և տնտեսական ազդեցությունների գնահատման վերաբերյալ
   - տեղեկացնել հնարավոր ազդակիր կողմերին հանքարդյունահանման և վերամշակման գործողությունների հետ կապված զգալի ռիսկերի և նախաձեռնվող միջոցների արդյունավետության մասին
   - ապահովել ռիսկի կառավարման համակարգերի ներդրումը, դրանց պարտադիր վերանայումն ու նորացումը
   - մշակել և իրականացնել արտակարգ իրավիճակներին արձագանքելու միջոցառումներ ազդակիր կողմերի հետ համատեղ:

5. *Ապահովել աշխատանքի անվտանգություն.*
   - կիրառել ընկերության և ենթակապալառու կազմակերպությունների աշխատողների, ինչպես նաև ազդակիր համայնքի բնակիչների առողջության

և անվտանգության վրա զգալի ազդեցություն գործող գործողությունների բարելավմանն ուղղված կառավարման համակարգ
- ձեռնարկել գործնական միջոցներ աշխատատեղերում վնասվածքները, պատահարները և մասնագիտական հիվանդությունները նվազեցնելու ուղղությամբ
- իրականացնել առողջապահական և աշխատանքի անվտանգության դասընթացներ՝ ապահովելով նաև հանքարդյունաբերական ընկերության կապալառու կազմակերպության մասնակցությունն այդ դասընթացներին
- իրականացնել աշխատողների պարբերական բժշկական զննում
- հնարավորության դեպքում ցուցաբերել բուժօգնություն և հետագայում վերաներգրավել հիվանդությունից կամ վնասվածքներից ապաքինված աշխատողներին:

6. *<u>Ապահովել էկոլոգիական անվտանգություն.</u>*
- գնահատել նախագծերի դրական և բացասական, ուղղակի և անուղղակի, ինչպես նաև կումուլյատիվ էկոլոգիական ազդեցությունները՝ հանքի նախապատրաստումից մինչև փակումը
- կիրառել բնապահպանական կառավարման համակարգ՝ ուղղված էկոլոգիական ազդեցությունների ուսումնասիրմանը, կանխարգելմանը, մեղմացմանը կամ բարելավմանը
- վերականգնել գործողությունների արդյունքում խախտված կամ ժամանակավոր զբաղեցրած հողատարածքները
- ապահովել փուչ ապարների և այլ թափոնների անվտանգ տեղադրումը
- անհրաժեշտ ռեսուրսներ նախատեսել գործողությունների ավարտի հետ կապված բնապահպանական պահանջները կատարելու համար:

7. *<u>Կիրառել կենսաբազմազանության պահպանության և հողօգտագործման պլանավորման միասնական մոտեցումներ.</u>*
- հաշվի առնել օրենքով սահմանված հատուկ պահպանվող տարածքները
- տարածել կենսաբազմազանության պահպանության և օգտագործման կառավարման առաջադեմ փորձը
- աջակցել հանքարդյունահանման գործողությունների և հողօգտագործման պլանավորման ու կենսաբազմազանության կոնսերվացման՝ գիտականորեն հիմնավորված և թափանցիկ միասնական միջոցառումների իրականացմանը:

8. *<u>Խրախուսել արտադրության արդյունքների ռացիոնալ օգտագործումը, օգտահանումը, վերացիկլավորումն ու պատշաճ տեղադրումը.</u>*
- հաշվի առնել մետաղների և հանքային հումքի հնարավոր տևական ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա
- իրականացնել կամ խթանել էներգետիկ և այլ ռեսուրսախնայող և անվտանգ տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված հետազոտություններ
- մշակել հումքի և նյութերի օգտագործման միասնական կառավարման հիմնադրույթ
- շահագրգիռ կողմերին տրամադրել ստույգ տվյալներ ընկերության արտադրանքի և գործողությունների վերաբերյալ
- կիրառել գիտականորեն հիմնավորված արտադրանքի ստանդարտներ և կատարել մետաղական և հանքային արտադրանքի անվտանգ օգտագործմանը նպաստող նյութերի ընտրություն:

9. *<u>Նպաստել ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը.</u>*
- մշակել և առաջարկել ազդակիր համայնքներում իրատեսական առողջապահական, կրթական, փոքր բիզնեսի զարգացման, աղքատության հաղթահարման և այլ ծրագրեր՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ
- հավանական ազդակիր կողմերին ներգրավել հնարավորինս ամենավաղ փուլում՝ քննարկելու և արձագանքելու սոցիալական ազդեցության կառավարման հետ կապված հարցերին ու բախումներին:

10. *Ապահովել տնտեսական և ֆինանսական գործունեության հաշվետվությունների թափանցիկություն.*
    - կազմել և ներկայացնել հաշվետվություն կայուն զարգացման գործընթացին հանքամշակող ընկերության տնտեսական, սոցիալական և բնապահպանական աջակցության մասին
    - ներկայացնել ճշգրիտ, արդիական և օպերատիվ տեղեկատվություն
    - ապահովել շահագրգիռ կողմերի ներգրավումը և բաց քննարկումների ժամանակ պատասխանել նրանց հարցերին ու մտահոգություններին:

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Բիզնեսի էթիկան կիրառական էթիկայի ձևերից է, որը ենթադրում է տնտեսական գործունեության մեջ էթիկայի սկզբունքների կիրառում և առաջացող բարոյական հիմնախնդիրների լուծում: 1980-1990 թթ. ընթացքում կտրուկ աճել է բիզնեսի էթիկայի նկատմամբ ինչպես տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ գիտական համայնքի հետաքրքրությունը: Այսօր դա 21-րդ դարի համաշխարհային շուկայական հարաբերությունների անընդհատ աճող հրամայականն է: Այն պարտադրում է բիզնեսի բարոյականության նորմերի կիրառում՝ հաճախ նոր հասարակական նախաձեռնությունների և օրենքների միջոցով:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ ԿՍՊ (Corporate Social Responsibility - CSR) բիզնես մոդելի մեջ ինտեգրված կորպորատիվ ինքնակարգավորման ձև է, որի միջոցով տնտեսվարող սուբյեկտը ապահովում և հսկում է իր գործունեության համապատասխանությունը օրենքի պահանջներին, բարոյական ստանդարտներին և միջազգային նորմերին: Այն հայտնի է նաև որպես կորպորատիվ խիղճ, կորպորատիվ քաղաքացիություն կամ կայուն պատասխանատու բիզնես: ԿՍՊ-ով առաջնորդվող ընկերությունը պատասխանատվություն է կրում շրջակա միջավայրի, սպառողների, աշխատողների, համայնքների և այլ շահագրգիռ կողմերի վրա ունեցած իր ազդեցությունների համար: Այն կամավոր կերպով, անկախ օրենքի պահանջներից, հաշվի է առնում հասարակության շահերը, աշխատում է խուսափել իր գործունեության բացասական ազդեցություններից, նպաստում է ազդակիր համայնքների աճին և զարգացմանը:

Քանի որ ԿՍՊ համընդհանուր ստանդարտ գոյություն չունի, օգտագործվում է համանման սկզբունքների վրա հիմնված «հիմնական չափորոշիչների եռյակը» (Triple Bottom Line – 3BL): Այն առաջարկվել է Ջոն Էլկինգթոնի կողմից 1994 թ.-ին՝ նպատակ ունենալով ընկերությունների հաշվետությունների ավանդական շրջանակն ընդլայնել՝ բացի ֆինանսական արդյունքներից արտացոլելով նաև էկոլոգիական և սոցիալական կատարողականը:

Այսպիսով, ԿՍՊ-ն կորպորատիվ որոշումների կայացման գործընթացում հասարակական շահերի ինտեգրումն է՝ նպատակաուղղված առավելագույն շահույթի ստացմանը՝ միաժամանակ ապահովելով մարդկանց բարեկեցությունն ու շրջակա միջավայրի անվտանգությունը: Այն ենթադրում է, որ ընկերության տնտեսական օգուտները պետք է ստացվեն՝ միաժամանակ հաշվի առնելով մարդկային ռեսուրսները, ռիսկի կառավարման անհրաժեշտությունը, շահագրգիռ կողմերի շահերն ու գերակայությունները, ինչպես նաև իրականացնելով սոցիալական հաշվապահություն, աուդիտ և հաշվետվություն: Վերջիններս հանդիսանում են ԿՍՊ կարևոր բաղկացուցիչ, և դրանց համար մշակվել են հատուկ ուղեցույցներ և ստանդարտներ:

ԿՍՊ շրջանակներում ձևավորվել են բազմաթիվ նախաձեռնություններ և մշակվել հաշվետվողականության մի շարք մեխանիզմներ: Ստորև ներկայացված են դրանց շարքում առավել մեծ տարածում գտածները:

AA1000 ստանդարտներ[15]

AA1000 ստանդարտները մշակվել են «Հաշվետվողականություն» (AccountAbility)[16] միջազգային կազմակերպության կողմից՝ «ձևավորելու նոր մտածելակերպ, հարաբերություններ և լծակներ, որոնք թույլ կտան մարդկանց, հաստատություններին և կազմակերպություններին դիմադրել գլոբալ մարտահրավերներին»: Այս ստանդարտի նպատակներն են շահագրգիռ կողմերի համար ապահովել բաց, արդար և արդյունավետ մասնակցության հնարավորություններ, ընկերություններում, տնտեսության ճյուղերում, տարածաշրջաններում մշակել և խրախուսել պատասխանատու մրցակցության ռազմավարություններ, նորամուծություններ ներդնող ընկերությունների համար մշակել և զարգացնել արդյունավետ համագործակցային կառավարման ռազմավարություններ, մշակել կայունության չափանիշներ:

Կապակցված հաշվետվության համակարգ[17]

Կապակցված հաշվետվությունների համակարգը (Connected Reporting Framework) մշակվել է «Հաշվապահություն հանուն կայունության» ծրագրի[18] շրջանակներում: Այն իրենից ներկայացնում է հաշվետվությունների մոդել, որը սովորական ֆինանսական տվյալների հետ մեկտեղ ապահովում է կայունության վերաբերյալ առանցքային տվյալներ, ինչը թույլ է տալիս առավել լիարժեք տեղեկատվություն ստանալ ընկերության գործունեության մասին:

Փոխկապակցված հաշվետվությունների համակարգի հիմնական սկզբունքները ներառում են հետևյալը.

- կայունության հարցերը պետք է սերտորեն կապված լինեն ձեռնարկության ընդհանուր ռազմավարության հետ
- կայունության և սովորական ֆինանսական տեղեկատվությունը պետք է ներկայացվեն համատեղ՝ պարզ և սեղմ ձևով
- ներկայացումը պետք է լինի տրամաբանական և հնարավորություն տա կատարել դինամիկայի և այլ ձեռնարկությունների հետ համեմատություններ
- ներառվում են հինգ հիմնական էկոլոգիական ցուցանիշներ ջերմոցային գազերի արտանետումների, էներգետիկ ռեսուրսների, ջրի և այլ սպառվող ռեսուրսների սպառման ու թափոնների մասին
- համակարգը համատեղելի է կայունության հաշվետվություններ կիրառող այլ կազմակերպությունների, մասնավորապես, Գլոբալ հաշվետվության նախաձեռնության, ՄԱԿ-ի հաշվապահական ստանդարտների և այլ մոդելների հետ:

Արդար աշխատանքի ասոցիացիա[19]

Արդար աշխատանքի ասոցիացիան (Fair Labor Association) բազմաթիվ շահագրգիռ կողմեր ներառող մի նախաձեռնություն է, որի նպատակն է միավորել ընկերությունները, համալսարանները և հասարակական կազմակերպությունները՝ բարելավելու աշխատանքային պայմանները ազգային և միջազգային աշխատանքային օրենսդրությունները ամենուրեք համապատասխանացնելու միջոցով: Այս ասոցիացիային

[15] Տես՝ http://www.accountability.org/standards/index.html
[16] Տես՝http://www.accountability.org
[17] Տես՝ http://www.sustainabilityatwork.org.uk/strategy/report/0
[18] Տես՝ http://www.sustainabilityatwork.org.uk
[19] Տես՝ http://www.fairlabor.org

միացող ընկերությունները պարտավորվում են կիրառել աշխատանքի կազմակերպման միջազգային ստանդարտների վրա հիմնված «Աշխատատեղերում վարքագծի կանոններ» (Workplace Code of Conduct), ներդնել մոնիթորինգային համակարգեր՝ հսկելու աշխատանքային պայմանները, ինչպես նաև աջակցել ասոցիացիայի կանոնադրության նորմերի կիրառմանը մատակարարման շղթայի իրենց գործընկերների հետ հարաբերություններում:

Ասոցիացիան աշխարհի շատ երկրներում գտնվող ավելի քան 4500 ձեռնարկություններում իրականացնում է անկախ աուդիտ գնահատելու համար ընկերության գործունեության համապատասխանությունը «Աշխատատեղերում վարքագծի կանոններ»-ին և ընկերության ջանքերը ապահովել այդ համապատասխանությունը: Ընկերության գործունեության համապատասխանության դեպքում այն ասոցիացիայի կողմից ստանում է հավատարմագրում:

Արտաքին մոնիթորինգի նման համակարգը նաև նպաստում է թափանցիկությանը: Մասնավորապես, աուդիտների արդյունքները, ինչպես նաև թերությունների վերացման համար մշակված գործողությունների պլանները տեղադրվում են ասոցիացիայի ինտերնետային կայքում:

Լավագույն կորպորացիաների ստանդարտ[20]

Լավագույն կորպորացիաների ստանդարտը (Good Corporation's Standard) մշակվել է «Լավագույն կորպորացիա» կազմակերպության[21] նախաձեռնությամբ, որն ունի համաշխարհային ճանաչում որպես կորպորատիվ պատասխանատվության և բիզնեսի բարոյականության հաստատման ուղղությամբ գործող առաջատար կազմակերպություններից մեկը: Ստանդարտը մշակվել է Բիզնեսի էթիկայի ինստիտուտի հետ համագործակցությամբ՝ արձագանքելով ընկերությունների թափանցիկ և պատասխանատու ձևով գործելու նկատմամբ անընդհատ աճող պահանջարկին: Չնայած գործում են այդ խնդրին առնչվող մի շարք նախաձեռնություններ, դրանք մեծ մասամբ վերաբերում են կառավարման որոշակի ասպեկտներին: Ուստի կարիք կար ստեղծել մեկ միասնական ստանդարտ, որը հետևողականորեն հաշվի կառներ բոլոր փոխհարաբերություններն ու ազդեցությունները: Կազմակերպությունը օգնում է ընկերություններին ձեռք բերել և պահպանել ամենաարժեքավոր բարիքը՝ լավ հեղինակությունը, ինչը հատկապես կարևոր է այն ընկերությունների համար, որոնք ուզում են դուրս գալ միջազգային շուկա:

Այս ստանդարտը մշակելիս «Լավագույն կորպորացիայի» հիմնական նպատակն է եղել բոլոր շահագրգիռ կողմերի (բաժնետերեր, գործատուներ, մատակարարներ, համայնքներ, շրջակա միջավայր) շահերի հաշվի առնելը: Ստանդարտի խնդիրներն են՝ կիրառելի լինել բոլոր ձեռնարկությունների համար՝ անկախ նրանց չափերից, տիպից և տեղաբաշխվածությունից, չստեղծել անհարկի թղթաբանություն, լինել արդյունավետ: Այս ստանդարտը ազատ մատչելի փաստաթուղթ է, որը հետաքրքրված ընկերությունը կարող է ներբեռնել և օգտագործել իր սեփական «Աշխատանքային վարքագծի կանոնները» մշակելու նպատակով՝ նախապես պատշաճ կերպով տեղեկացնելով Լավագույն կորպորացիա կազմակերպությանը:

[20] Տես՝ http://www.goodcorporation.com/good-corporation-standard.php
[21] Տես՝ http://www.goodcorporation.com

SA8000 ստանդարտ[22]

SA8000 ստանդարտը աշխատատեղերում մարդու իրավունքների պաշտպանության ստանդարտ է, որը մշակվել է Տնտեսական գերակայությունների խորհրդի կողմից Սոցիալական հաշվետվողականության միջազգային կազմակերպության (Social Accountability International - SAI)[23] նախաձեռնությամբ: SA8000-ը կամավոր կատարման ստանդարտ է, որը հիմնված է ՄԱԿ-ի և ԱՄԿ-ի կոնվենցիաների և հայտարարագրերի, ազգային աշխատանքային օրենսգրքերի և Ստանդարտների միջազգային կազմակերպության (International Standards Organization - ISO) կառավարման համակարգերի վրա: Ստանդարտն արտացոլում է մարդու հիմնական իրավունքների հետևյալ հիմնահարցերը. երեխաների շահագործում, աշխատուժի ստիպողական շահագործում, առողջապահական և անվտանգության հարցեր, միավորվելու ազատություն, աշխատատեղերում խտրականություն, աշխատանքային կարգապահություն, աշխատաժամանակ և աշխատանքի վարձատրություն: Ստանդարտը կիրառող ընկերությունները պետք է ընդգրկեն այս հարցերը իրենց կառավարման համակարգերում:

Սոցիալական հաշվապահության ստանդարտն իրականացնում է իր նպատակները հետևյալ գործողությունների միջոցով.

- Դասընթացներ և տեխնիկական աջակցություն. վկայագրում է SA8000 աուդիտորներին և օգնում ընկերություններին դասընթացների և տեղեկատվություն տրամադրելու միջոցով.
- Հավատարմագրում. լիազորում է որակավորված աուդիտորներին վկայագրել աշխատատեղերը սոցիալական հաշվառման ստանդարտներին դրանց համապատասխանության դեպքում: Պարբերաբար աուդիտի է ենթարկում աուդիտորներին, բայց չի իրականացնում ընկերությունների աուդիտ.
- Աուդիտի արդյունավետության բարձրացում. անընդհատ վերանայում է աուդիտի գործընթացը հետևյալ եղանակներով՝ դիմումների և բողոքների համակարգի ներդրում, աուդիտորական հիմնախնդիրների վերանայման և լավագույն փորձի տարածման համար քննարկումների կազմակերպում, հասարակական կազմակերպությունների ու արհմիությունների ներգրավման ընդլայֆում.
- Ուսումնասիրություն և կատարելագործում. մշակում և վերամշակում է սոցիալական հաշվառման ստանդարտներ և ուղեցույցներ, ուսումնասիրում լավագույն փորձը, վերլուծում վկայագրման ծախսերն ու օգուտները.
- Կորպորատիվ ծրագրեր. աջակցում է ընկերություններին SA8000 ստանդարտին հատուկ սկզբունքներն ու կառավարման համակարգերի մոտեցումները մատակարարման ողջ շղթայում կիրառելու առումով.
- Փոխօգնության միությունների ստեղծում. համագործակցում է արհմիությունների, ընկերությունների, հասարակական կազմակերպությունների, կառավարությունների և միջազգային կազմակերպությունների հետ խորհրդակցությունների, կորպորատիվ ծրագրերի, տարածաշրջանային աշխատանքային քննարկումների, պիլոտային աուդիտների միջոցով Սոցիալական հաշվապահության միջազգային SA8000 ստանդարտի կատարելագործման ուղղությամբ:

Բնապահպանական կառավարման ISO 14000 ստանդարտ[24]

Սա բնապահպանական կառավարման համակարգերի միջազգայնորեն ճանաչված ստանդարտների խումբ է, որը մշակվել է Ստանդարտացման միջազգային կազմակերպության[25] կողմից՝ օգնելու ընկերություններին նվազեցնել շրջակա միջավայրի վրա իրենց գործունեության բացասական ազդեցությունները: ISO 14000 ստանդարտների խմբի հիմնական նպատակն է՝ առաջարկել օգտակար և կիրառելի արդյունավետ,

[22] Տես՝ http://www.sa-intl.org/index.cfm?fuseaction=Page.ViewPage&PageID=937
[23] Տես՝ http://www.sa-intl.org
[24] Տես՝ http://www.iso14000-iso14001-environmental-management.com
[25] Տես՝ http://www.iso.org/iso/home.html

համակարգված, ճկուն և լավագույն կազմակերպչական փորձի վրա հիմնված գործիքներ բնապահպանական տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և տարածման համար:

ISO 14000 ստանդարտները կիրառելի են բոլոր ընկերությունների համար՝ անկախ նրանց չափերից, տեղաբաշխվածությունից և եկամուտներից: Դրանք ընդգրկում են հետևյալը.

- ISO 14001՝ բնապահպանական կառավարման համակարգերի կիրառման հիմնական պահանջների ուղեցույց
- ISO 14004՝ բնապահպանական կառավարման համակարգերի սկզբունքների և աջակցող մեթոդների ընդհանուր ուղեցույց
- ISO 14015՝ տեղանքների և կազմակերպությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- ISO 14020 շարք (14020-14025)՝ էկոլոգիական պիտակավորում և հայտարարագրեր
- ISO 14031՝ էկոլոգիական գործունեության գնահատման ուղեցույց
- ISO 14040 շարք (14040-14049)՝ ձեռնարկության գործունեության ողջ ցիկլի գնահատում, ներառյալ՝ նախնական պլանավորումը և բնապահպանական նպատակների առաջադրումը
- ISO 14050՝ տերմիններ և սահմանումներ
- ISO 14062՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների բարելավում
- ISO 14063՝ էկոլոգիական հաղորդակցության ուղեցույցներ և օրինակներ
- ISO 14064՝ ջերմոցային գազերի արտանետումների չափումներ և կրճատման ուղիներ:

Հաշվապահության և հաշվետվության միջազգային ստանդարտներ[26]

Հաշվապահության և հաշվետվության միջազգային ստանդարտները (International Standards of Accounting and Reporting - ISAR) մշակվել են ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից: Այս ստանդարտների Փորձագետների միջկառավարական աշխատանքային խումբը մշակել է էկո-արդյունավետության չափանիշներին, կորպորատիվ պատասխանատվության հաշվետվությանը և կորպորատիվ կառավարման տեղեկատվության հրապարակմանը վերաբերող կամավոր կատարման համար տեխնիկական ուղեցույց: Այն կենտրոնացել է մի շարք ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի կորպորատիվ հաշվետվությունների վրա՝ ներառելով հետևյալը.

- Միջազգային ֆինանսական հաշվետվության ստանդարտների կիրառում
- Հաշվապահական հաշվառում փոքր և միջին ձեռնարկություններում
- Կորպորատիվ կառավարման հրապարակումներ
- Կորպորատիվ պատասխանատվության հաշվետվություններ
- Բնապահպանական հաշվառում և հաշվետվություններ:

Գլոբալ կոմպակտ[27]

Գլոբալ կոմպակտը (Global Compact) ՄԱԿ-ի նախաձեռնությունն է՝ խրախուսելու ընկերություններին ամբողջ աշխարհում որդեգրել կայուն զարգացման և սոցիալական պատասխանատվության քաղաքականություն և հաշվետու լինել դրա իրականացման մասին: Գլոբալ կոմպակտը մշակել է «Առաջընթացի մասին հաղորդակցություն»

[26] Տես՝ http://www.unctad.org/Templates/StartPage.asp?intItemID=2531&lang=1
[27] Տես՝ http://www.unglobalcompact.org

(Communication on Progress)[28] հաշվետվության ձևը և հռչակել ճիշտ տնտեսվարման հետևյալ 10 սկզբունքները, որոնք վերաբերում են մարդու իրավունքների, աշխատանքի, շրջակա միջավայրի և հակակոռուպցիոն գործունեության բնագավառներին:

Մարդու իրավունքներ

- Սկզբունք 1. Աջակցել և պաշտպանել միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքները
- Սկզբունք 2. Համոզվել, որ մարդու իրավունքների իմաստը չի աղավաղվում

Աշխատանքի ստանդարտներ

- Սկզբունք 3. Ճանաչել միավորվելու ազատություններն ու կոլեկտիվ գործարքների իրավունքները
- Սկզբունք 4. Արգելել ստիպողական կամ հարկադրական աշխատանքի ցանկացած ձև
- Սկզբունք 5. Բացառել երեխաների աշխատանքի շահագործումը
- Սկզբունք 6. Բացառել խտրականության ցանկացած դրսևորում աշխատատեղերում և աշխատանքի ընդունելիս

Շրջակա միջավայր

- Սկզբունք 7. Կանխարգելման մոտեցում ցուցաբերել էկոլոգիական հիմնախնդիրներին
- Սկզբունք 8. Ձեռնարկել էկոլոգիական պատասխանատվության խթանման միջոցառումներ
- Սկզբունք 9. Խրախուսել էկոլոգիական տեսանկյունից բարենպաստ տեխնոլոգիաների ներդնումն ու տարածումը

Հակակոռուպցիոն գործունեություն

- Սկզբունք 10. Պայքարել կոռուպցիայի ցանկացած դրսևորման, այդ թվում՝ կաշառակերության և շորթման դեմ:

Գլոբալ հաշվետվությունների նախաձեռնություն [29]

Գլոբալ հաշվետվությունների նախաձեռնությունը՝ ԳՀՆ-ն (Global Reporting Initiative - GRI) ցանցային կազմակերպություն է: Այն առաջին նախաձեռնությունն է, որ մշակել և կիրառում է հաշվետվությունների մի ընդհանուր համակարգ, որը կարող է ապահովել տնտեսական գործունեության՝ կայուն զարգացմանը համահունչ լինելու մասին հավաստի և հուսալի տեղեկատվություն: ԳՀՆ համակարգը սկզբունքների և չափանիշների ամբողջությունն է, որի միջոցով ընկերությունը կարող է ներկայացնել հաշվետվություն իր տնտեսական, բնապահպանական և սոցիալական գործունեության մասին: ԳՀՆ համակարգը կիրառելի է ցանկացած տիպի և չափի ձեռնարկության համար՝ անկախ գործունեության ոլորտից ու աշխարհագրական տեղաբաշխվածությունից:

ԳՀՆ համակարգը մշակվել է մասնակցային եղանակով՝ տնտեսավարող սուբյեկտների, արհմիությունների և աշխատանքային կոլեկտիվների, հասարակական կազմակերպությունների՝ աշխարհի ավելի քան 60 երկրների ներկայացուցիչների համատեղ ջանքերով: Այն այսօր կիրառվում է աշխարհի հազարավոր ձեռնարկությունների կողմից որպես իրենց գործունեության կայունության մասին հավաստիացում: ԳՀՆ-ն շարունակում է հետամուտ լինել հաշվետվությունների համակարգի անընդհատ կատարելագործմանն ու տարածմանը:

[28] Տես՝ http://www.unglobalcompact.org/docs/communication_on_progress/Tools_and_Publications/Practical_Guide_2008.pdf
[29] Տես՝ http://www.globalreporting.org

ԳՀՆ շրջանակում մշակվել է «Կայունության հաշվետվության ուղեցույց» (Sustainability Reporting Guidelines), որի հիման վրա տրված հաշվետվությունները թույլ են տալիս պատկերացում կազմել այն մասին, թե որքանով է ընկերության գործունեությունը համապատասխանում երկրում գործող օրենքներին, նորմերին, կանոնակարգերին, ստանդարտներին, իր իսկ կողմից ստանձնած կամավոր պարտավորություններին: Դրանք նաև տալիս են տեղեկություն ձեռնարկության գործունեության դինամիկայի և կայուն զարգացմանը նպաստելու դրա պատրաստակամության մասին:

ԳՀՆ ուղեցույցը նաև պարունակում է արձանագրություններ և առանձին ոլորտների հավելվածներ: Հանքարդյունաբերության և մետաղների ոլորտի հավելվածը ներառում է տնտեսական գործունեության, բնապահպանական գործունեության, մարդու իրավունքների, աշխատանքային պրակտիկայի ու արժանապատիվ աշխատանքի, արդյունքի նկատմամբ պատասխանատվության և սոցիալական ցուցանիշներ: Սույն հրապարակման մեջ մանրամասնված են, մասնավորապես, այն ցուցանիշները, որոնք առավել կարևորվել են մեր կողմից օրինավոր ընդերքօգտագործման համատեքստում:

Տնտեսական գործունեության ցուցանիշներ

Ձեռնարկության տնտեսական գործունեությունը ամենաէականն է նրա կայունության որոշման համար: Չնայած տնտեսական գործունեության մասին տեղեկատվությունը ներկայացվում է տարեկան ֆինանսական հաշվետվություններում, որոնք պարունակում են տվյալներ ձեռնարկության ֆինանսական վիճակի, փոփոխությունների և տեղաշարժերի, ինչպես նաև դրամական միջոցների կառավարման մասին, այնուամենայնիվ, այդ տեղեկատվությունը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել, թե ձեռնարկությունը որքանով է նպաստում կայուն զարգացմանը: Տնտեսավարող սուբյեկտը կարող է լինել ֆինանսապես կենսունակ, սակայն դա կարող է լինել այլ կողմերի վրա զգալի բացասական ազդեցությունների հաշվին:

Կայունության հաշվետվության ցուցանիշները կոչված են չափելու ձեռնարկության տնտեսական արդյունքները և դրանց ազդեցությունը շահագրգիռ կողմերի լայն շրջանակի վրա:

EC1. Ստեղծված և վերաբաշխված ուղղակի տնտեսական արժեքը, այդ թվում՝ արտադրական ծախսերը, եկամուտները, աշխատանքի դիմաց փոխհատուցումը, դոտացիաները և այլ պետական ֆինանսական աջակցությունը, զուտ շահույթը, վարկային կապիտալի դիմաց վճարները և այլն. Սրանք երկրի տնտեսության և հասարակության համար հանքարդյունաբերական ընկերության կողմից ստեղծված արժեքի և դրա վերաբաշխման տվյալներն են: Դրանք պետք է քաղված լինեն ֆինանսական աուդիտի ենթարկված ընկերության ֆինանսական հաշվեկշիռներից և հաշվարկված լինեն Միջազգային հաշվապահական ստանդարտների կառավարման խորհրդի կողմից (International Accounting Standards Board - IASB) ընդունված «Հաշվետվության միջազգային ֆինանսական ստանդարտներին» (International Financial Reporting Standards - IFRS), մասնավորապես, Եկամտահարկի միջազգային հաշվապահական ստանդարտ (ՄՀՍ) 12-ին (International Accounting Standard (IAS) 12 on Income Taxes), Եկամուտների ՄՀՍ 18-ին (IAS18 on Revenues), Սեգմենտային հաշվետվության ՄՀՍ 14-ին (IAS 14 on segment Reporting) և Աշխատողների արտոնությունների ՄՀՍ 19-ին (IAS 19 on Employee Benefits) համապատասխան:

EC2. Հանքարդյունաբերական ընկերության գործունեության համար կլիմայի փոփոխության ֆինանսական հետևանքները և այլ ռիսկերը. Կլիմայի փոփոխությունը (օդի ջերմաստիճանի բարձրացումը, ջրային ռեսուրսների քանակի նվազումը և այլ էկոլոգիական փոփոխություններ) բազմապիսի ռիսկեր է առաջացնում ձեռնարկության, ներդնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Քանի որ պետությունը իր վրա է վերցրել կլիմայի փոփոխությունների հետ կապված գործողությունների կառավարումը, ապա հաշվի առնելով, որ հանքարդյունահանող ընկերությունները այս կամ այն չափով ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում են ջերմոցային գազերի արտանետումներին (հատկապես այն դեպքերում, երբ հանքի մշակումը կապված է անտառահատումների հետ), կարևորվում է

ջերմոցային գազերի արտանետումների թույլատրելի սահմանների համակարգի կիրառումը: Կայունության հաշվետվության ուղեցույցի EN16 ցուցանիշը պարտադրում է բացահայտել ջերմոցային գազերի արտանետումների ծավալները, իսկ EN18 ցուցանիշը ներկայացնում է տալիս հաշվետու ընկերության արտանետումների կրճատման չափը և նախաձեռնված միջոցառումները: Այս ցուցանիշի շրջանակներում հաշվետվության մեջ ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը. դիտարկե՞լ է արդյոք ընկերության ղեկավարությունը կլիմայի փոփոխության ասպեկտը և ընկերության համար դրա հնարավոր ռիսկերը, որքա՞ն են կլիմայի փոփոխության արդյունքում առաջացած ընկերության ֆինանսական ծախսերը, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների ռիսկերի հետ կապված՝ նոր օրենսդրության հետ համաձայնեցնելու գործողությունների և համակարգերի ներդրմանն առնչվող ծախսերը:

EC3. Սոցիալական արտոնությունների ծրագրի առկայությունը և կատարման պարտավորությունները. Սոցիալական արտոնությունների ծրագիրը ձեռնարկությունում գործում է ի լրումն կենսաթոշակառուների պլանի և գործատուի համար ենթադրում է որոշակի պարտավորութուններ: Իսկ հիմնովին մշակված և ֆինանսավորված սոցիալական արտոնությունների ծրագիրն իր հերթին կարող է նպաստել կադրերի հոսունության կրճատմանը, աշխատուժի կայունությանը, ինչը թույլ կտա գործատուին երկարաժամկետ ռազմավարական տնտեսական և ֆինանսական պլաններ մշակել և իրականացնել: Այս ցուցանիշի շրջանակներում հաշվետվությունների մեջ նշվում է սոցիալական արտոնությունների ծրագրի առկայությունը՝ ըստ առաջարկվող արտոնությունների տեսակների: Կիրառվում է Աշխատողների արտոնությունների ՄՀՍ 19-ը (IAS 19 on Employee Benefits):

EC4. Պետական ֆինանսական աջակցությունը. Պետական ֆինանսական աջակցության չափը համեմատության մեջ դրվելով ընկերության կողմից մուծվող հարկերի հետ առավել լիարժեք պատկերացում է տալիս երկրի տնտեսության և հասարակության համար հանքարդյունաբերական ընկերության կողմից ստեղծված արժեքի մեծության և դրա վերաբաշխման մասին: Այս ցուցանիշի շրջանակներում ներկայացվում է տեղեկատվություն հետևյալի առկայության և չափերի մասին. հարկային արտոնություններ, վարկեր, սուբսիդիաներ, ինվեստիցիոն դրամաշնորհներ, գիտա-հետազոտական և զարգացման դրամաշնորհներ, այլ դրամաշնորհներ, մրցանակներ, ռոյալթի արտոնություններ, տարբեր ֆինանսական խթաններ և այլ աջակցություն: Ներկայացվում է նաև տեղեկատվություն պետության բաժնետիրական մասնակցության մասին: Կիրառվում է Պետական դրամաշնորհների հաշվապահություն ՄՀՍ 20-ը (International Accounting Standard (IAS) 20 on Accounting for Government Grants):

EC5. Հանքարդյունահանող ընկերությունում աշխատողների սկզբնական աշխատավարձի ընդունված ստանդարտ մակարդակի հարաբերությունը տեղական նվազագույն աշխատավարձի մակարդակին. Այս ցուցանիշը թույլ է տալիս պատկերացում կազմել այն մասին, թե որքանով է ընկերությունը նպաստում իր աշխատողների բարեկեցության բարձրացմանը: Այն նաև տեղեկություն է տալիս տեղական աշխատանքային շուկայում ընկերության աշխատավարձերի մրցունակության մասին և հնարավորություն տալիս գնահատել աշխատավարձի մակարդակից այդպիսի շուկայի կախվածությունը: Նվազագույն մակարդակից բարձր աշխատավարձերի վճարումը կարող է ընկերության համար շահավետ լինել համայնքների հետ բարիդրացիական հարաբերությունների ստեղծման, աշխատողների կողմից ընկերության նկատմամբ հավատարիմ վերաբերմունքի ամրապնդման, ինչպես նաև՝ ընկերության գործունեության սոցիալական վարկանիշի բարձրացման առումով: Հաշվետվության մեջ ներկայացվում է տեղեկատվություն մասնավորապես հետևյալի մասին. նվազագույն աշխատավարձով վարձատրվող աշխատողների թիվը և տեսակարար կշիռը աշխատողների ընդհանուր թվի մեջ, տեղական նվազագույն աշխատավարձի համեմատությունը հաշվետու ընկերության սկզբնական աշխատավարձի մակարդակի հետ, այդ հարաբերության տատանումները գործունեության տարբեր վայրերում, ամսական աշխատավարձի դրույքաչափը մեկ ժամի կտրվածքով:

EC6. Տեղական մատակարարների հետ հարաբերությունների քաղաքականությունը, ձևերը և գործարքների համամասնությունները. Համայնքների վրա հանքարդյունահանող ընկերության ազդեցությունը կարող է դուրս գալ աշխատուժի զբաղվածությունը

ապահովելու և հարկեր մուծելու սովորական շրջանակներից: Ընկերությունը կարող է նպաստել համայնքների տնտեսական զարգացմանը նաև անուղղակի ձևով՝ մատակարարման շղթայում տեղական բիզնեսին նախընտրություն տալով և դրանով համայնքների համար լրացուցիչ ներդրումներ ներգրավելով: Հաշվետվության մեջ հստակեցվում է, թե ունի՞ արդյոք ընկերությունը տեղական մատակարարների նախընտրության քաղաքականություն, և եթե այո, գործունեության կոնկրետ վայրում ներկայացվում է տեղական մատակարարներից ապրանքների ու ծառայությունների գնումների արժեքի տեսակարար կշիռը գնումների ընդհանուր արժեքի մեջ, նշվում են տեղական մատակարարի ընտրության վրա ազդող գործոնները (բացի աշխարհագրական տեղաբաշխվածությունից, օրինակ՝ գինը, բնապահպանական կամ սոցիալական գործունեությունը):

EC7. Ընկերության գործողությունների վայրում տեղական բնակչությունից բանվորական և ղեկավար աշխատուժ վարձելու կարգը և համամասնությունները. Աշխատակազմում, ինչպես բանվորական, այնպես էլ ղեկավար անձնակազմում, տեղաբնակների ընդգրկումը ձեռնտու է և տեղական համայնքներին, և ձեռնարկությանը, քանի որ թույլ է տալիս ավելի լավ հասկանալ ու հաշվի առնել տեղական համայնքների և բնակչության կարիքները, դրանով իսկ՝ ընդլայնել ընկերության մարդկային կապիտալը և ամրապնդել ընկերություն-համայնք դրական կապերը: Հաշվետվության մեջ ներկայացվում է թե ունի արդյոք ընկերությունը աշխատուժի վարձման տեղաբնակների նախընտրության քաղաքականություն, որքան է տեղաբնակների տեսակարար կշիռը ղեկավար անձնակազմի ընդհանուր թվի մեջ և բանվորական կազմի ընդհանուր թվի մեջ

EC8. Ընկերության կողմից ֆինանսական ներդրումներ և ծառայություններ՝ հասարակական ենթակառուցվածքների զարգացման նպատակով՝ առևտրային, բնաիրային և բարեգործական հիմքերով. Բացի ուղղակի տնտեսական արժեքի ստեղծումից ընկերությունը կարող է ազդեցություն ունենալ համայնքների տնտեսության վրա նաև ներդրումներ կատարելով ենթակառուցվածքների մեջ, օրինակ՝ տրանսպորտային ուղիների, կոմունալ ծառայությունների, սոցիալական կառույցների, մարզական կազմակերպությունների, առողջապահական հիմնարկների, մշակութային կենտրոնների և այլն: Այդպիսի ներդրումները կարող են դուրս գալ ընկերության սեփական տնտեսական գործունեության շրջանակներից և շարունակվել նաև այդ տարածքում նրա գործունեությունը ավարտելուց հետո: Դրանք կարող են լինել ինչպես դրամական միջոցների տեսքով, այնպես էլ որոշակի ծառայությունների մատակարարման համար սեփական աշխատուժի տրամադրման տեսքով: Հաշվետվության մեջ նշվում է իրականացվող ներդրումների բնույթը՝ առևտրային, բնաիրային կամ բարեգործական, ենթակառուցվածքների կամ ծառայությունների նկատմամբ համայնքի կարիքների գնահատումը և այդպիսի գնահատման արդյունքները:

EC9. Անուղղակի տնտեսական ազդեցությունների մեկնաբանությունն ու նկարագրությունը. Կայուն զարգացման տեսանկյունից անուղղակի տնտեսական ազդեցությունները ընկերության տնտեսական գործունեության կարևոր մաս են կազմում: Ի տարբերություն ուղղակի տնտեսական ազդեցությունների, որոնք բնութագրվում են շահագրգիռ կողմերի համար դրամական հոսքերի անմիջական հետևանքներով, անուղղակի ազդեցությունները՝ ֆինանսական գործարքների և դրամի շրջանառության ընթացքում լրացուցիչ, որպես կանոն, ոչ-դրամական ազդեցություններն են: Անուղղակի տնտեսական ազդեցությունները հաշվի առնելը չափազանց կարևոր է ընկերության համար հատկապես շուկայի ընդլայնման և ընկերության դրական սոցիալական վարկանիշի ստեղծման տեսանկյունից: Հաշվետվության մեջ պետք է ներկայացվի հետևյալ տեղեկատվությունը.

- այն աշխատանքների նկարագրությունը, որոնք իրականացվել են պետական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ընկերության անուղղակի տնտեսական ազդեցությունները բացահայտելու նպատակով
- ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունների օրինակներ
- ընկերության, հանքարդյունաբերության ոլորտի կամ ողջ տնտեսության (եթե առկա է) արդյունավետության բարձրացումը, օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման և տարածման շնորհիվ

- աղքատության բարձր մակարդակով բնութագրվող համայնքների տնտեսական զարգացումը, օրինակ՝ մեկ աշխատատեղից ստացվող եկամուտի հաշվին ապրող մարդկանց թվի փոփոխությունը
- սոցիալական կամ էկոլոգիական պայմանների բարելավման/վատթարացման տնտեսական օգուտները/վնասները, օրինակ՝ փոքր ընտանեկան ֆերմաները մեծ տնտեսությունների վերածելու արդյունքում աշխատանքի շուկայի փոփոխությունը, աղտոտման տնտեսական վնասները
- ապրանքների և ծառայությունների մատչելիության պատկերի փոփոխությունը ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների համար, օրինակ՝ գնային քաղաքականության և կառավարման միջոցով բարեկեցության մակարդակի բարձրացումը
- համայնքներում աշխատուժի մասնագիտական հմտությունների և գիտելիքների մակարդակի բարձրացումը, օրինակ՝ ընկերությունների աճող պահանջարկը որակյալ մասնագետների նկատմամբ առաջացնում է նոր կրթական օջախների ստեղծման անհրաժեշտություն
- ընկերության ընդլայնման/կրճատման մատակարարման կամ վերաբաշխման շղթայի այլ տնտեսվարող սուբյեկտների վրա ազդեցության գնահատումը
- արտաքին ներդրումների խրախուսումը, օրինակ՝ զարգացող երկրում ենթակառուցվածքային ծառայության ընդլայնումը/կրճատումը կարող է հանգեցնել արտասահմանյան կապիտալի ներդրման ընդլայնմանը/կրճատմանը
- ընկերության գործողությունների տեղաբաշխվածության փոփոխման տնտեսական ազդեցությունը, օրինակ՝ տվյալ համայնքում աշխատանքի շուկայի կրճատում
- անուղղակի տնտեսական ազդեցությունների կարևորությունը շահագրգիռ կողմերի տեսանկյունից, ինչպես նաև միջազգային ստանդարտներին, արձանագրություններին և օրակարգերին համապատասխանության առումով:

Բնապահպանական գործունեության ցուցանիշներ

Կայուն զարգացման մյուս կարևոր բաղադրիչը էկոլոգիական ասպեկտն է, այսինքն տնտեսական գործունեության իրականացումը՝ նվազագույն ներգործություն ունենալով շրջակա միջավայրի վրա: Բնապահպանական ցուցանիշների համակարգը նպատակ ունի արտացոլելու, մի կողմից, բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, մյուս կողմից, շրջակա բնական միջավայրի վրա հանքարդյունահանող ընկերության գործունեության ազդեցությունների տեսակները, մաշտաբներն ու դրանց կանխման կամ մեղմացման համար ձեռնարկված միջոցառումները:

EN1. Օգտագործվող նյութերի ֆիզիկական ծավալները. Այս ցուցանիշը բնութագրում է, թե որքանով է հանքարդյունահանող ընկերությունը նպաստում երկրի ռեսուրսային ներուժի պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը: Քանի որ նյութերի սպառումը ուղղակիորեն կապված է ձեռնարկության ընդհանուր արտադրական ծախսերի հետ, ապա նյութերի տեսքով բնական ռեսուրսների սպառման կրճատումը տնտեսապես ձեռնտու է նաև ձեռնարկություններին արտադրության ծախսատարության կրճատման առումով: Հաշվետվության մեջ նշվում են բոլոր օգտագործվող նյութերը, այդ թվում՝ արտաքին մատակարարներից ձեռք բերված և ներքին աղբյուրներից գնվածները. հումք (բնական ռեսուրսներ ապրանքների և ծառայությունների արտադրության համար, օրինակ՝ մետաղական հանքաքար, հանքանյութեր, բնափայտ), օժանդակ նյութեր (արտադրության պրոցեսում անհրաժեշտ նյութեր, որոնք օժանդակում են հիմնական արտադրանքի արտադրությունը, օրինակ՝ մեքենաշինության մեջ քսանյութեր), կիսաֆաբրիկատներ և մասեր, փաթեթավորման համար նյութեր: Նշվում են օգտագործվող հիմնական նյութերը և չվերականգնվող ռեսուրսները՝ ըստ քաշի կամ ծավալների:

EN2. Վերացիկլավորված կամ երկրորդային հումքի տեսակարար կշիռը. Այս ցուցանիշը ցույց է տալիս հաշվետու ձեռնարկությունում վերացիկլավորված հումքի օգտագործումը, ինչը թույլ է տալիս իջեցնել առաջնային ռեսուրսների նկատմամբ պահանջարկը և նպաստել ռեսուրսային ներուժի պահպանմանը: Առաջնային հումքը փոխարինող վերացիկլավորված նյութերը իջեցնում են արտադրական ծախսերը: Հաշվետվության մեջ նշվում են օգտագործվող նյութերի ընդհանուր քաշը կամ ծավալը, վերացիկլավորված նյութերի ընդհանուր քաշը կամ ծավալը, գնահատման մեթոդը և

վերացիկլավորված նյութերի տեսակարար կշռը օգտագործված հումքի ընդհանուր ծավալի մեջ:

EN3. էներգիայի ուղղակի սպառումը առաջնային էներգետիկ աղբյուրից. Ընկերության բնապահպանական գործունեությունը բնութագրվում է նաև էներգետիկ ռեսուրսների աղբյուրի նրա ընտրությամբ: Էներգետիկ աղբյուրների հաշվեկշռում այս կամ այն տեսակի տեսակարար կշռի փոփոխությունը կարող է վկայել ձեռնարկության ջանքերի մասին՝ նվազագույնի հասցնելու իր գործունեության էկոլոգիական ազդեցությունները: Առաջնային էներգետիկ ռեսուրսների աղբյուրների մասին տեղեկատվությունը թույլ է տալիս գնահատել, թե ինչպիսի ազդեցություն ընկերության համար կարող են ունենալ շրջակա միջավայրի ոլորտը կարգավորող փաստաթղթերը, օրինակ՝ Կիոտոյի արձանագրությունը: Վառելիքի սպառումը՝ ջերմոցային գազերի արտանետումների հիմնական աղբյուրն է և դրա փոխարինումը այլընտրանքային վերականգնվող էներգետիկ ռեսուրսներով էական նշանակություն ունի կլիմայի փոփոխության և այլ էկոլոգիական ազդեցությունների դեմ պայքարի համար:

EN4. էներգիայի անուղղակի սպառումը առաջնային էներգետիկ աղբյուրից.

EN5. Արդյունավետության բարձրացման հաշվին էներգետիկ ռեսուրսների տնտեսումը. Այս ցուցանիշի համար ներկայացվում է տեղեկատվություն ընկերության էներգախնայողության կամ վերականգնվող էներգետիկ արտադրանքի և ծառայությունների օգտագործմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև՝ էներգետիկ ռեսուրսների պահանջարկի կրճատման մասին՝ որպես այդ նախաձեռնությունների արդյունք: Վերականգնվող և արդյունավետ էներգետիկ տեխնոլոգիաների խթանում նաև իջեցնում է ընկերության ընթացիկ և ապագա կախվածությունը չվերականգնվող էներգիայի աղբյուրներից և մատակարարների ու գների տատանումներից:

EN6. Ընկերությունում ձեռնարկված միջոցառումները էներգախնայող կամ վերականգնվող էներգետիկ աղբյուրների օգտագործման վրա հիմնված արտադրանք արտադրելու կամ ծառայություններ մատուցելու ուղղությամբ, ինչպես նաև՝ էներգիայի նկատմամբ պահանջարկի նվազման մեծությունը՝ որպես այդ միջոցառումների հետևանք

EN7. էներգետիկ ռեսուրսների անուղղակի սպառման նվազմանն ուղղված միջոցառումները և սպառման նվազման մեծությունը.

EN8. Ջրառի ընդհանուր ծավալը՝ ըստ աղբյուրների. Ըստ աղբյուրների ջրառի մասին հաշվետվությունը թույլ է տալիս պատկերացում կազմել հանքարդյունահանող ընկերության ջրօգտագործման ծավալների հնարավոր ազդեցությունների մասին: Ջրառի ծավալից ելնելով կարելի է հաշվարկել արտադրության արդյունավետության այլ ցուցանիշներ: Ջրի սպառման ընդհանուր ծավալը ցույց է տալիս նաև ընկերության կախվածությունը ջրամատակարարումների ընդհատումների կամ ջրի գնի բարձրացման ռիսկերից: Քաղցրահամ՝ խմելու ջուրը գնալով սակավ է դառնում աշխարհում, ինչը կարող է ազդեցություն ունենալ ջրի մեծ ծավալների օգտագործման վրա հիմնված արտադրությունների համար: Ջրային ռեսուրսների դեֆիցիտ ունեցող տարածաշրջաններում ընկերության ջրի սպառման կառուցվածքը կարող է ազդել այլ շահագրգիռ կողմերի հետ նրա հարաբերությունների վրա:

EN9. Ջրառի ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա. Ջրային համակարգերից ջրառը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի մի շարք ազդեցությունների, օրինակ՝ ջրի մակարդակի իջեցում, օգտագործման համար առկա ջրի քանակի կրճատում կամ էկոհամակարգերի գործառույթների վրա այլ ներգործություն, ինչը, որպես կանոն, ունենում է բացասական տնտեսական հետևանքներ: Նույն աղբյուրից օգտվող այլ ջրօգտագործողների հետ փոխհարաբերությունների տեսանկյունից այս ցուցանիշը թույլ է տալիս բացահայտել հնարավոր լարվածության տեղամասերը, ինչպես նաև որոշել ընկերության ջրի աղբյուրի կայուն լինելը:

EN10. Վերացիկլավորված կամ կրկնակի օգտագործված ջրի ընդհանուր ծավալը. Վերացիկլավորված կամ կրկնակի օգտագործված ջրի տեսակարար կշիռը օգտագործված ջրի ընդհանուր ծավալում կարող է ծառայել որպես ջրօգտագործման արդյունավետության ցուցանիշ և կարող է վկայել ջրառի ընդհանուր ծավալի կամ թողքերի կրճատման գործում ընկերության ձեռքբերումների մասին: Վերացիկլավորված կամ կրկնակի օգտագործված ջրի ծավալների մեծացումը կարող է նպաստել ջրի սպառման, մաքրման և թողքերի ծախսերի կրճատմանը, իսկ ջրի սպառման կրճատումն իր հերթին նպաստում է ազգային, տարածքային և տեղական մակարդակներում ջրամատակարարման կառավարման բարելավմանը:

EN11. Հատուկ պահպանվող և հարող տարածքների, ինչպես նաև դրանցից դուրս կենսաբազմազանության տեսանկյունից մեծ արժեք ներկայացնող հողատարածությունների մակերեսը. Հաշվետվություն ներկայացնելով նշյալ տարածքներում հնարավոր ազդեցությունների մասին՝ հաշվետու ընկերությունը կարող է գնահատել կենսաբազմազանության համար ռիսկերը և կառավարել դրանք:

EN12. Հատուկ պահպանվող և դրանց հարող, ինչպես նաև դրանցից դուրս կենսաբազմազանական մեծ արժեք ներկայացնող տարածքներում գործողությունների մեծ ազդեցությունների նկարագրությունը. Այս ցուցանիշն ապահովում է տեղեկատվություն կենսաբազմազանության վրա ընկերության ուղղակի և անուղղակի բոլոր ազդեցությունների մասին, թույլ է տալիս հասկանալ ընկերության՝ այդ ազդեցությունները մեղմացնելու ռազմավարությունը, ինչպես նաև հնարավորություն է տալիս կատարել տարբեր ձեռնարկությունների ազդեցությունների չափի և ինտենսիվության համեմատություններ:

- *MM1. Հանքարդյունահանման ընկերության կողմից վարձակալված և տնօրինվող խախտված և/կամ վերականգնված հողատարածությունների մակերեսները.* Կենսաբազմազանության և արեալների վրա ազդեցության գնահատումը առավել ճշգրիտ կարող է լինել հանքարդյունահանման արդյունքում այդ տարածքների խախտված և վերականգնված հողերի մակերեսների բացահայտման դեպքում:

EN13. Կենսաբազմազանության ապրելավայրերի կամ աճելավայրերի պահպանվող կամ վերականգնված մակերեսները. Կենսաբազմազանության ռազմավարությունը հանքարդյունաբերական ընկերության գործունեության ազդեցությունները կանխարգելող, մեղմացնող կամ հետևանքները վերացնող միջոցառումների համակարգ է: Այդպիսի ռազմավարության առկայությունն ապահովում է շրջակա բնական միջավայրի կայունությունը, և դրանով իսկ՝ բարձրացնում ընկերության դրական վարկանիշը մերձակա համայնքներում:

EN14. Կենսաբազմազանության վրա ազդեցությունների կառավարման ռազմավարությունների, հեռանկարային ծրագրերի և ընթացիկ գործողությունների պլանների առկայությունը.

- *MM2. Կենսաբազմազանության կառավարման պլաններ ունեցող տարածքների քանակը և տեսակարար կշիռը այդպիսի պլանների կարիք ունեցող տարածքների ընդհանուր թվի մեջ.* Այս ցուցանիշը բացահայտում է, թե որ տարածքները և էկոհամակարգերն են ընկերության կողմից համարվում պահպանության ենթակա:

EN15. Միջազգային և ազգային Կարմիր գրքերում գրանցված տեսակների թիվը՝ ըստ վտանգվածության ռիսկի աստիճանի, որոնց ապրելավայրերը կամ աճելավայրերը գտնվում են հանքարդյունահանման գործողությունների կամ դրանց հարող տարածքներում. Այս ցուցանիշը թույլ է տալիս բացահայտել առավել խոցելի տարածքները և կենսաբազմազանության համար ռիսկերի տեսակները:

EN16. Ջերմոցային գազերի ուղղակի և անուղղակի արտանետումների ընդհանուր ֆիզիկական ծավալը.

EN17. Ջերմոցային գազերի այլ անուղղակի արտանետումների ֆիզիկական ծավալները.

EN18. Ջերմոցային գազերի արտանետումները կրճատելուն ուղղված միջոցառումները և արտանետումների կրճատման մեծությունները

EN19. Օզոնային շերտը քայքայող արտանետումների ֆիզիկական ծավալները.

EN20. NOx, SOx և այլ վնասակար գազերի մեծածավալ արտանետումների ծավալներն ու տիպերը.

EN21. Կեղտաջրերի ընդհանուր ծավալները՝ ըստ կազմի և արտահոսքի թափման կետերի. Հանքարդյունաբերական ընկերության արտադրական կեղտաջրերի քանակն ու որակը ուղղակիորեն կապված է նրա էկոլոգիական ազդեցությունների և արտադրական ծախսերի հետ: Այդպես՝ չմաքրվող կեղտաջրերի քիմիական կազմը և մեծ ծավալները հանգեցնում են մատակարարվող ջրի որակի անկմանը և, այդ իսկ պատճառով, համայնքների և այլ ջրօգտագործողների հետ փոխհարաբերությունների վատթարացմանը: Մյուս կողմից, կեղտաջրերի նախնական մաքրումը ոչ միայն իջեցնում է աղտոտման մակարդակը, այլև թույլ է տալիս խուսափել ջրային ավազան արտահոսքերի դիմաց վճարներից և բարձրացնել ընկերության սոցիալական վարկանիշը: Հաշվետվության մեջ նշվում են ընկերության նախատեսված և չնախատեսված արտահոսքերը՝ ըստ դրանց թափման կետերի և մաքրման եղանակները:

EN22. Թափոնների ընդհանուր ծավալները՝ ըստ տեսակի և տեղադրման եղանակի. Թափոնների տեսակների և ծավալների դինամիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել այս գործում ընկերության ձեռքբերումների մասին: Ֆինանսական տեսանկյունից՝ թափոնների կրճատումը նշանակում է հումքի և նյութերի տնտեսում և թափոնների տեղադրման ծախսերի նվազեցում: Հաշվետվության մեջ նշվում են հարքարդյունաբերական գործունեության արդյունքում առաջացած թափոնների քանակը, ներառյալ՝ վտանգավոր թափոնները (դասակարգված օրենքի համաձայն) և անվտանգ թափոնները (կարծր և հեղուկ թափոնների այլ տեսակներ, ինչպիսիք են՝ յուղերը, օգտագործված մալուխը, գրասենյակային և կենցաղային աղբը, մետաղի ջարդոնը, սալիկների ջարդոնը և այլ շինարարական աղբը): Նշել թափոնների քանակն ըստ տեղադրման հետևյալ եղանակների՝ թաղում, վերօգտագործում, վերացիկլավորում, վերամշակում, այրում (կամ որպես վառելիք օգտագործում), հետլիցքի համար օգտագործում, տեղում պահեստավորում, այլ (նշելով եղանակները).

- *MM3. Փուչ ապարների, լեռնային ապարների, պոչանքների և հարստացման թափոնների ընդհանուր ծավալները և դրանցից առաջացող ռիսկերը.*

EN23. Մեծածավալ արտահոսքերի ընդհանուր թիվն ու ծավալները՝ ըստ արտահոսքի տեղի, և կազմի՝ յուղային, վառելիքի, կեղտաջրերի, քիմիկատների և այլն.

EN24. Բազելյան կոնվենցիայի համաձայն վտանգավոր համարվող թափոնների փոխադրման, ներմուծման, արտահանման կամ մշակման ծավալները՝ ըստ փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների.

EN25. Ընկերության կեղտաջրերի թողքերի ազդակիր ջրային օբյեկտները, դրանց պահպանության կարգավիճակը և կենսաբազմազանական նշանակությունը. Հաշվետվության մեջ անհրաժեշտ է ներկայացնել ջրային օբյեկտի մեծությունը՝ խորանարդ մետրերով, ջրային օբյեկտի պահպանվող լինելը կամ հատուկ պահպանվող տարածքում գտնվելը և կենսաբազմազանության վտանգված տեսակների թիվը:

EN26. Հանքարդյունաբերական ընկերության գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումները և դրանց արդյունքները.

EN27. Արտադրանքի օգտահանված մնացորդների կամ դրանց վերօգտագործված փաթեթավորման նյութերի տեսակարար կշիռը. Սպառումից հետո արտադրանքի մնացորդների կամ դրանց փաթեթավորման նյութերի տեղադրումը օրեցօր աճող

էկոլոգիական խնդիր է: Արդյունավետ վերացիկլավորման կամ վերաօգտագործման համակարգերի ներդնումը արտադրության ցիկլերի պարփակման նպատակով զգալիորեն նպաստում է արտադրության ռեսուրսահատույցի բարձրացմանը և նյութատարության նվազեցմանը:

EN28. Բնապահպանական օրենքների չկատարման և բնապահպանական իրավախախտումների համար տույժերի և այլ պատժամիջոցների դրամական մեծությունը.

EN29. Արտադրանքի, հումքի և նյութերի և այլ փոխադրումների զգալի էկոլոգիական ազդեցությունները.

EN30. Ընդհանուր բնապահպանական ծախսերը և ներդրումներն՝ ըստ տիպերի. Բնապահպանական ծախսերի հաշվառումը թույլ է տալիս ընկերությանը գնահատել բնապահպանական միջոցառումների, բնապահպանական գործունեության բարելավման կազմակերպչական և տեխնոլոգիական համալիր ներդրումների արդյունավետությունը: Դրանց հիման վրա հնարավոր է իրականացնել ծախսեր-օգուտներ վերլուծություն: Այս ցուցանիշը վերաբերում է թափոնների տեղադրման, արտանետումների նվազեցման, վերականգնողական միջոցառումների ծախսերին, ինչպես նաև կանխարգելիչ և բնապահպանական կառավարման ծախսերին:

Մարդու իրավունքների ցուցանիշներ

Տնտեսվարող սուբյեկտներն իրենց գործունեությամբ անխուսափելիորեն այս կամ այն չափով ազդեցություն են գործում շահագրգիռ կողմերի քաղաքական և քաղաքացիական իրավունքների վրա: Մարդու իրավունքների ցուցանիշները բացահայտում են այդ ազդեցությունները: Դրանք հիմնվում են միջազգային մակարդակում համընդհանուր ճանաչված նորմերի, առաջին հերթին՝ ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» և ԱՄԿ-ի «Աշխատանքային հիմնարար սկզբունքների և իրավունքների հայտարարագրի», մասնավորապես, ԱՄԿ-ի 8 հիմնական կոնվենցիաների դրույթների վրա: Չնայած մարդու իրավունքների և աշխատանքային հարաբերությունների միջև սերտ կապին, այդ կատեգորիաներն, այնուամենայնիվ, տարբերվում են: Աշխատանքային դրույթներն արտացոլում են աշխատանքային միջավայրը, այդ թվում՝ աշխատանքի անվտանգությունը, և աշխատանքների կատարման կարգն ու որակը, իսկ մարդու իրավունքների ապահովման ցուցանիշները՝ ընկերության կողմից մարդու հիմնարար իրավունքների պահպանումը, ընկերության ներսում և շահագրգիռ կողմերի համար մարդու իրավունքների խախտումների դեպքերը և այն ռիսկերը, որոնք կարող է ունենալ ընկերությունը նման խախտումների հետևանքով: Հաշվետվությունը ներառում է մարդու հիմնական իրավունքների խախտումների դեպքերը, մարդու իրավունքների պահպանության հարցերին առավել արդյունավետ կերպով անդրադառնալու հնարավորություններն ու գիտելիքները, այդ թվում՝ դասընթացների կազմակերպումը և իրազեկման բարձրացման այլ միջոցառումներ, ընկերության կողմից մարդու իրավունքներին առնչվող ասպեկտների ինտեգրումը նաև իր տնտեսական գործընկերների հետ կապերի մեջ[30]:

HR1. Ընկերության՝ մարդու իրավունքների պայմանագրային պարտավորություններ պարունակող համաձայնագրերի քանակն ու տեսակարար կշիռը ներդրումային համաձայնագրերի ընդհանուր թվի մեջ. Այս ցուցանիշը արտացոլում է, թե որքանով են մարդու իրավունքների հարցերը ինտեգրված ընկերության տնտեսական ռազմավարության մեջ: Մարդու իրավունքներին պատշաճ անդրադարձը ներդրումների ռիսկայնության

[30] Հղումները՝ ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» (1948), ՄԱԿ-ի «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» կոնվենցիա (1966), ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» կոնվենցիա (1966), ԱՄԿ-ի «Աշխատանքային հիմնարար սկզբունքների և իրավունքների հայտարարագիր» (1998), Վիեննայի հայտարարագիր և գործողությունների ծրագիր (1993), ԱՄԿ-ի «Եռակողմ հայտարարագիր միջազգային ձեռնարկությունների և սոցիալական քաղաքականության մասին» (2001)

իջեցման գործոններից է: Ընկերության ներսում այս բնագավառում տեղ գտած թերությունները կարող են լուրջ վնաս հասցնել ընկերության վարկանիշին և բացասաբար անդրադառնալ ներդրումների կայունության վրա:

HR2. Հիմնական մատակարարների և ենթակապալառուների տեսակարար կշիռը, որոնց գործունեությունն ուսումնասիրվել է մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից. Այս ցուցանիշը ներկայացնում է, թե որքանով է ընկերությունը տարածում մարդու իրավունքների պահպանության իր դրական փորձը իր բիզնես միջավայրում, մասնավորապես, մատակարարման շղթայում:

HR3. Աշխատողների համար մարդու իրավունքների քաղաքականության և միջոցառումներին նվիրված դասընթացների ընդհանուր ժամաքանակը և մասնակիցների տեսակարար կշիռը ընկերությունում կազմակերպվող դասընթացների մասնակիցների ընդհանուր թվի մեջ. Մարդու իրավունքները աստիճանաբար հստակեցվելով և զարգանալով հաստատապես ամրագրվել են միջազգային իրավունքի նորմերում և դա պարտադրում է ընկերություններին հատուկ դասընթացներ անցկացնել՝ իրազեկելու աշխատողներին ամենօրյա աշխատանքում իրենց հիմնարար իրավունքների պաշտպանության հնարավորության մասին:

HR4. Ընկերության ներսում և դրա շահագրգիռ կողմերի շրջանում կրոնական, քաղաքական, սեռական, ազգային, սոցիալական ծագման և այլ խտրականության ու շահերի ոտնահարման դեպքերի ընդհանուր թիվը և ձեռնարկված միջոցները.

HR5. Ընկերության ներսում աշխատողների միավորվելու կամ կոլեկտիվ գործարքներ իրականացնելու ազատության իրավունքի խախտման կամ վտանգված լինելու դեպքերը և կանխարգելման միջոցառումները.

HR6. Երեխաների աշխատանքի շահագործման դեպքերը և նման երևույթների բացառմանն ուղղված միջոցառումները.

HR7. Աշխատուժի ստիպողական կամ պարտադրական կիրառման դեպքերը և նման երևույթների բացառմանն ուղղված միջոցառումները.

HR8. Ընկերության՝ մարդու իրավունքներին առնչվող քաղաքականության և միջոցառումների մասին դասընթացներում վերապատրաստում անցած անվտանգության անձնակազմի անդամների թիվը. Անվտանգության անձնակազմի վարվելակերպը երրորդ կողմերի հետ մեծ չափով կախված է մարդու իրավունքների հարցերով նրանց վերապատրաստված լինելուց, հատկապես՝ ուժ կիրառելու հարցում: Անվտանգության անձնակազմի վերապատրաստումը թույլ է տալիս հաղթահարել վարկանիշի անկման տարբեր ռիսկերը, որոնք առաջանում են այդ անձնակազմի անհամաչափ գործողություններից կամ մոտեցումներից:

- *MM5. Տեղաբնակների բնակավայրերում կամ դրանց մերձակայքում տեղի ունեցող գործողությունների քանակը և համայնքների պաշտոնական համաձայնությունը ստացած գործողությունների տեսակարար կշիռը այդ բնակավայրում ընթացող գործողությունների ընդհանուր թվի մեջ.*

HR9. Տեղաբնակների իրավունքների խախտման դեպքերի ընդհանուր թիվը և ձեռնարկված միջոցառումները:

Աշխատանքային պրակտիկայի և արժանապատիվ աշխատանքի ցուցանիշներ[31]

Արժանապատիվ աշխատանքի օրակարգը ձևավորված է ԱՄԿ-ի կողմից աշխատանքային արդարության սկզբունքի հիման վրա և նպատակ ունի տնտեսական աճն ապահովել տնտեսական և սոցիալական իրավահավասար նպատակների զուգակցման ճանապարհով: Այդ օրակարգի չորս փոխկապակցված բաղադրիչներն են զբաղվածությունը, երկխոսությունը, իրավունքներն ու պաշտպանվածությունը: Աշխատանքային ցուցանիշների համակարգը լայնորեն հիմնվում է «արժանապատիվ աշխատանքի» հիմնադրույթի վրա:

LA1. Աշխատակազմը՝ ըստ զբաղվածության և պայմանագրի ձևի[32]. Աշխատակազմի թվաքանակը թույլ է տալիս պատկերացում կազմել հանքարդյունաբերական ձեռնարկությունում աշխատանքային խնդիրների առաջացման մասշտաբների մասին: Դրա դասակարգումն ըստ զբաղվածության և պայմանագրի ձևի ցույց է տալիս, թե ընկերությունում մարդկային ռեսուրսները ինչպես են կազմակերպված: Այս ցուցանիշը հիմք է ծառայում այս խմբի բոլոր այլ ցուցանիչների հաշվարկման համար: Զուտ զբաղվածության աճը/կրճատումը դիտարկված երեք և ավելի տարիների համար վկայում է համընդհանուր տնտեսական զարգացման և աշխատուժի կայունության ապահովման գործում ընկերության ներդրման մասին:

LA2. Աշխատանքային կադրերի հոսունությունն՝ ըստ տարիքի, սեռի և գործողությունների տարածքի. Աշխատող կադրերի բարձր արտահոսքը վկայում է ընկերության ղեկավարության նկատմամբ աշխատողների անվստահության և դժգոհության մասին, ինչպես նաև կարող է ազդանշել ընկերության հիմնական գործողությունների կառուցվածքում տեղի ունեցող արմատական փոփոխությունների մասին: Տարիքային կամ սեռական կառուցվածքում հոսունության անհամաչափ պատկերը կարող է վկայել աշխատատեղի նկատմամբ անհամապատասխանության կամ հնարավոր իրավաանհավասարության մասին: Կադրերի հոսունությունը հանգեցնում է մարդկային և մտավոր կապիտալի փոփոխություններին և ազդում է տնտեսական արդյունավետության վրա:

LA3. Դրույքային աշխատողներին տրվող արտոնությունները, որոնք չեն տրվում կես դրույքով աշխատողներին՝ ըստ հիմնական գործունեության ձևերի[33]. Արտոնությունները կարող են լինել կյանքի ապահովագրություն, առողջապահական արտոնություններ, անաշխատունակության թոշակ, մայրության նպաստ, ծերության թոշակ և այլն: Այս ցուցանիշն արտացոլում է այն ներդրումները, որոնք ընկերությունը կատարում է մարդկային ռեսուրսների մեջ և այն նվազագույն արտոնությունները, որոնք առաջարկվում են դրույքային աշխատողներին:

LA4. Կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերում ընդգրկված աշխատողների տեսակարար կշիռը. Կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերը հանդիսանում են շահագրգիռ կողմերի ներգրավվածության կարևոր ձև և այդ իսկ պատճառով հատկապես կարևորվում են հաշվետվության մեջ: Դա շահագրգիռ կողմերի զբաղվածության այն ձև է, որը նպաստում է ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորմանն ու զարգացմանը, որը դիտվում է որպես կայուն հասարակության կայացման հիմք: Կորպորատիվ կառավարման հետ մեկտեղ այն ընկերության արդյունավետ կառավարման համընդհանուր համակարգի անբաժան մասն է կազմում:

---

[31] Հղումները՝ ԱՄԿ «Աշխատողների միավորվելու ազատությունների և իրավունքների պաշտպանության մասին» 87 կոնվենցիա (1948), ԱՄԿ «Աշխատողների ներկայացուցիչների մասին» 135 կոնվենցիա (1971), ԱՄԿ «Աշխատանքային հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին հայտարարագիր» (1998), ԱՄԿ «Արժանապատիվ աշխատանքի օրակարգ» (1999), ՄԱԿ-ի «Հազարամյակի հայտարարագիր» (2000), ՏՀԶԿ «Կորպորատիվ կառավարման սկզբունքները» (2004) և այլն:

[32] Հղումները՝ ԱՄԿ «Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգում», ԱՄԿ «Աշխատանքային շուկայի հիմնական չափորոշիչներ», ԱՄԿ «LABORSTA ինտերնետային չափորոշիչներ» և ՄԱԿ «Աշխարհի մակրոտարածաշրջանները և դրանց բաղադրատարրերը»:

[33] Հղումները՝ ԱՄԿ-ի «Սոցիալական անվտանգության մասին» 102 կոնվենցիա (Նվազագույն ստանդարտներ) (1952), ԱՄԿ-ի «Սոցիալական անվտանգության իրավունքների պաշտպանության մասին» 157 կոնվենցիա (1982), ԱՄԿ-ի «Զբաղվածության աջակցության և գործազրկությունից պաշտպանության մասին» 168 կոնվենցիա (1988), ԱՄԿ-ի «Մայրության պաշտպանության մասին» 183 կոնվենցիա (2000) և այլն:

LA5. Գործունեության ձևերի կամ ուղղությունների նշանակալի փոփոխությունների մասին տեղեկացման նվազագույն ժամանակամիջոցը, այդ թվում՝ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերում դրանց արտացոլումը. Այս ցուցանիշն արտացոլում է, թե որքանով է ընկերությունն ապահովում քննարկումներ աշխատողների կամ նրանց ներկայացուցիչների սպասվող փոփոխությունների մասին: Աշխատողների և այլ շահագրգիռ կողմերի, օրինակ՝ կառավարության լիազոր մարմնի հետ, ժամանակին և արդյունավետ քննարկումները թույլ է տալիս նվազեցնել գործունեության փոփոխությունների՝ աշխատողների կամ համայնքների վրա բացասական ազդեցությունները:

- *MM4. Մեկ շաբաթը գերազանցող տևողությամբ գործադուլների և լոկաուտների թիվը.* Գործադուլերն ու լոկաուտները վկայում են աշխատուժ-ղեկավարություն փոխհարաբերությունների լուրջ խախտումների և ձախողումների մասին, ինչը զգալի վնաս է հասցնում ընկերության սոցիալական վարկանիշին:

LA6. Առողջապահության և աշխատանքի անվտանգության կառույցների (օրինակ՝ կոմիտեների) կողմից իրականացվող և հսկվող առողջապահական և անվտանգության ծրագրերում ընդգրկված աշխատողների տեսակարար կշիռը[34]*.* Առողջության և աշխատանքի անվտանգության կառույցների գոյությունը աշխատատեղերում մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և աշխատանքի անվտանգության բարելավման գործընթացում աշխատողների ներգրավման ուղիներից է: Չափանիշը ցույց է տալիս հանքարդյունաբերական ընկերության կազմակերպչական և ղեկավարման կառույցներում նման կոմիտեների ընգրկվածության և դրանցում աշխատողների ներկայացուցիչների ներգրավվածության աստիճանը:

LA7. Վնասվածքների, մասնագիտական հիվանդությունների, աշխատանքի չներկայացման օրերի և աշխատատեղերում պատահարների հետևանքով մահացությունների դեպքերի թիվն՝ ըստ ընկերության գործունեության բնագավառների. Աշխատողների առողջության և անվտանգության կառավարման և մասնագիտական հիվանդությունների ու աշխատատեղերում պատահարների միջև կախվածության ցուցանիշն արտացոլում է տալիս աշխատողների մասին հոգածության՝ ընկերությունում ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը[35]:

LA8. Աշխատողների, նրանց ընտանիքների անդամների, հասարակության այլ անդամների լուրջ հիվանդությունների (օրինակ՝ ՁԻԱՀ) կանխարգելման նպատակով կրթական, ուսուցողական, խորհրդատվական, կանխարգելիչ և ռիսկայնության իջեցման ծրագրերի առկայությունը[36]*.*

LA9. Արհմիությունների հետ պաշտոնական համաձայնագրերում առողջապահական և աշխատանքի անվտանգության հարցերի ընդգրկումը. Այս ցուցանիշն արտացոլում է, թե որքանով է երաշխավորված աշխատողների առողջապահական և անվտանգության հարցերի լուծումը: Համաձայնագրերը սովորաբար անդրադառնում են հետևյալ հարցերին.

- ԱՄԿ դրույթներին և նորմերին համապատասխանություն
- անհատական պաշտպանության միջոցներ
- «ղեկավարություն-աշխատողներ» համատեղ առողջապահական և անվտանգության կառույցների առկայություն
- աշխատողների ներկայացուցիչների մասնակցություն առողջապահական և անվտանգության ստուգայցերին, աուդիտին և պատահարների ուսումնասիրությանը
- իրազեկության բարձրացման դասընթացներ և կրթական այլ միջոցառումներ
- բողոքներ ներկայացնելու մեխանիզմ

---

[34] Հղումները՝ ԱՄԿ-ի «Աշխատատեղերում անվտանգության և առողջապահության մասին» կոնվենցիա և Արձանագրություն 155 (1981), և ԱՄԿ-ի «Աշխատատեղերում առողջապահական ծառայությունների մասին» 161 կոնվենցիա (1985):

[35] Հղումները՝ ԱՄԿ-ի «Աշխատատեղերում պատահարների և հիվանդությունների դեպքերի գրանցման և տեղեկացման կանոնադրություն» (1995), ԱՄԿ-ի «Աշխատատեղերում անվտանգության և առողջապահության կառավարման ուղեցույց» (2001)

[36] Հղումները՝ ԳՀՆ «Ռեսուրսային փաստաթուղթ», «ՁԻԱՀ հաշվետվության ուղեցույց»

- անվտանգության չապահովման դեպքերում աշխատանքից հրաժարվելու իրավունք
- պարբերաբար իրականացվող ստուգայցեր:

LA10. Մեկ աշխատողի հաշվով դասընթացների միջին տարեկան ժամաքանակ՝ ըստ աշխատողների կատեգորիաների. Դասընթացների և մասնագիտական վերապատրաստման միջոցով մարդկային կապիտալի պահպանումն ու զարգացումը ընկերության կազմակերպչական զարգացման կարևորագույն տարրերից է: Այս ցուցանիշը թույլ է տալիս պատկերացում կազմել այս բնագավառում ընկերության ներդրումների չափի մասին: Վերապատրաստման հնարավորությունների ընձեռումը նպաստում է նաև այլ սոցիալական բնագավառների առաջընթացին, ինչպես նաև՝ աշխատատեղը զբաղեցնելու աշխատողների միջև հավասար հնարավորությունների և արդարության ապահովմանը[37]:

LA11. Աշխատողների աշխատունակությունը պահպանելու և կարիերայի ապահովման նպատակով մասնագիտական որակավորման կառավարման ծրագրեր. Աշխատողների որակավորման կառավարման ծրագրերի միջոցով ընկերությունը հնարավորություն է ունենում պլանավորել փոփոխված աշխատանքային միջավայրում ռազմավարական նոր նպատակների համար համապատասխան որակավորում ունեցող կադրերի ապահովումը: Բարձր որակավորում ունեցող և ավելի վստահ աշխատուժը մի կողմից ամրապնդում է ընկերության մարդկային կապիտալը և մյուս կողմից՝ նպաստում է աշխատողների սոցիալական բավարարվածությանը: Այս ցուցանիշի միջոցով հնարավոր է պարզել, թե ապահովվում են արդյոք աշխատողների որակավորման կառավարման ծրագրերը: Այն ներառում է ընկերության ներսում կազմակերպվող ներքին որակավորման դասընթացները, այդ թվում՝ արտասահմանյան ուսումնական հաստատություններում կրթությունը և դասընթացների համար ֆինանսական աջակցությունը, աշխատատեղի երաշխավորված պահպանմամբ կրթական արձակուրդները և այլն:

LA12. Պարբերաբար ատեստացիա անցնող աշխատողների տեսակարար կշիռը. Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե ինչպես է ընկերությունը հսկում և պահպանում իր աշխատողների որակավորման մակարդակը:

LA13. Ղեկավարման մարմինների ձևավորումը և աշխատողների դասակարգումը ըստ կատեգորիաների՝ համաձայն սեռա-տարիքային խմբերի, ազգային փոքրամասնությունների և տարբերակման այլ ցուցանիշների. Այս ցուցանիշի կարևորությունը կայանում է նրանում, որ թույլ է տալիս հասկանալ ղեկավար մարմիններում տարիքային, սեռային և ազգային փոքրամասնությունների ներկայացչության աստիճանը:

LA14. Տղամարդկանց միջին աշխատավարձի հարաբերակցությունը կանանց աշխատավարձին՝ ըստ աշխատողների կատեգորիաների[38]. Չափանիշը բացահայտում է աշխատանքի վարձատրության խտրականության դեպքերը և կարող է ազդել ընկերության սոցիալական վարկանիշի վրա:

Արդյունքի նկատմամբ պատասխանատվության ցուցանիշներ

Արդյունքի նկատմամբ պատասխանատվության ցուցանիշները վերաբերում են ապրանքների ու ծառայությունների կառավարման ազդեցությանը հաճախորդների և օգտագործողների վրա: Դրանք արտացոլում են ընկերությունների կողմից թողարկվող արդյունքների ապահովությունը՝ առողջապահական ու անվտանգության տեսանկյունից, դրանց պիտակավորումը, մարքետինգային հաղորդակցությունը, մասնավոր տեղեկությունների գաղտնիության ապահովումը և ապրանքների ու ծառայությունների մատարակարմանն ու օգտագործմանն առնչվող իրավական ակտերին համապատասխանությունը:

[37] Հղումը՝ ԱՄԿ-ի «Մարդկային ռեսուրսների զարգացման մասին» 142 կոնվենցիա (1975)
[38] Հղումները՝ ԱՄԿ-ի «Համարժեք աշխատանքի դիմաց կանանց և տղամարդկանց վարձատրության հավասարության մասին» 100 կոնվենցիա (1951) և ԱՄԿ-ի «Խտրականության մասին» 111 կոնվենցիա (1958)

- MM11 Նյութերի խնայողաբար օգտագործմանն առնչվող ծրագրեր և առջընթաց

PR1. Արդյունաբերական ցիկլի փուլերը, որոնցում գնահատվում է ապրանքների և ծառայությունների ազդեցությունը առողջության և անվտանգության վրա՝ դրանց կատարելագործման նպատակով, և նման ընթացակարգերի ենթակա էական ապրանքների և ծառայությունների տեսակների տոկոսը.

PR2. Առողջապահական և անվտանգության վրա ապրանքների ու ծառայությունների ազդեցությանն առնչվող կանոնակարգերը և կամավոր կանոնները չկատարելու դեպքերի ընդհանուր թիվը՝ ըստ դրանց հետևանքների տեսակների.

PR3. Ապրանքների և ծառայությունների վերաբերյալ ընթացակարգերով սահմանված տեղեկությունների տեսակներ և տեղեկատվության նման պահանջների ենթակա էական ապրանքների և ծառայությունների տոկոսը.

PR4. Ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությանն ու պիտակավորմանն առնչվող կանոնակարգերը և կամավոր կանոնները չկատարելու դեպքերի ընդհանուր թիվը՝ ըստ դրանց հետևանքների տեսակների.

PR5. Հաճախորդների բավարվածության գնահատման պրակտիկան, ներառյալ՝ հաճախորդների բավարվածության գնահատման հարցումների արդյունքները.

PR6. Մարկետինգային հաղորդակցությանն, այդ թվում՝ գովազդին, քարոզչության և հովանավորման գործունեությանն առնչվող օրենքներին, ստանդարտներին և կամավոր կանոններին համապատասխանեցնելու ծրագրերը.

PR7. Մարկետինգային հաղորդակցությանն, այդ թվում՝ գովազդին, քարոզչության և հովանավորման առնչվող կանոնակարգերը և կամավոր կանոնները չկատարելու դեպքերի ընդհանուր թիվը՝ ըստ դրանց հետևանքների տեսակների.

PR8. Հաճախորդների մասնավոր տեղեկատվության գաղտնիության սկզբունքի խախտման և նրանց մասին տվյալների կորստան վերաբերյալ հիմնավորված բողոքների ընդհանուր թիվը.

PR9. Ապրանքների և ծառայությունների մատակարարմանն ու օգտագործմանն առնչվող օրենքներին և կանոնակարգերին էապես չհամապատասխանելու համար վճարված տուգանքները՝ դրամական արտահայտությամբ.

Սոցիալական ցուցանիշներ[39]

Աշխատանքային և մարդու իրավունքների հարցերը վերաբերում են շահագրգիռ կողմերի՝ հանքարդյունաբերական ընկերության աշխատողների, գործընկերների կամ համայնքների վրա սոցիալական ազդեցությունների հարցերին: Մյուս կողմից, ընկերությունների սոցիալական ազդեցությունները կապված են շահագրգիռ կողմերի համար սոցիալական միջավայր ստեղծող շուկայական և այլ կառույցների միջև փոխհարաբերությունների հետ: Այդպիսի փոխհարաբերությունները, ինչպես նաև սոցիալական խմբերի, օրինակ՝ համայնքների հետ, փոխհարաբերություններ կառուցելու ընկերության մոտեցումները հանդիսանում են կայուն գործելակերպի կարևոր բաղադրիչը, որոնց վրա հենց կենտրոնացած են սոցիալական ցուցանիշները: Դրանք, մասնավորապես, բացահայտում են կաշառակերության և պաշտոնեական դիրքի չարաշահման դեպքերի, որոշումների կայացման գործընթացում հասարակայնության ներգրավման, մենաշնորհային գործողությունների և օրենքների ու այլ իրավական ակտերի խախտման դեպքերի մասին տեղեկատվություն:

[39] ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին կոնվենցիա» (2003) և ՏՀԶԿ «Կորպորատիվ կառավարման սկզբունքներ» (2004)

SO1. Հանքարդյունաբերական ընկերության գործունեություն սկսելու, իրականացնելու և փակելու գործողությունների՝ համայնքների վրա ազդեցությունը գնահատող կամ կառավարող ցանկացած ծրագրի կամ գործնական փորձի բնույթը, շրջանակները և արդյունավետությունը. Հաշվետվությունը կարող է օգտակար լինել՝ բացահայտելու, թե ինչ միջոցներ են ձեռնարկում ընկերությունները բացասական ազդեցությունները մեղմացնելու և ազդակիր համայնքների զարգացմանը նպաստելու ուղղությամբ, և ինչպես է ընկերության գործունեությունից սպասվող օգուտների և հնարավոր ազդեցությունների գնահատման ներկայացումը արտացոլում դրանց մասին տեղաբնակների կարծիքը: Հաշվետվության մեջ նշվում է տեղական համայնքների վրա ընկերության գործողությունների ազդեցությունը գնահատող ծրագրերի առկայությունը մինչև համայնք մուտք գործելը և գործունեություն ծավալելը, գործունեություն իրականացնելու ընթացքում և գործունեությունն ավարտելուց/փակվելուց հետո: Համայնքների վրա ազդեցություն ասելով պետք է հասկանալ, առաջին հերթին, այն սոցիալական ազդեցությունները, որոնք կարող են բացասական հետևանքներ ունենալ՝ համայնքների բնակչության առողջության և ենթակառուցվածքների, վտանգավոր նյութերի, արտանետումների ու արտահոսքերի անվտանգության, ոչ կամավոր վերաբնակեցման, ֆիզիկական և տնտեսական տեղահանման ու կենսամիջոցների վերականգնման և համայնքների գենդերային հարցերի ու մշակութային ժառանգության առումով:

Հատուկ ուշադրության արժանի հարցերն են.

- համայնքների տնտեսական զարգացման պլանավորման գործընթացը, այդ թվում՝ համայնքի եկամուտների աղբյուրը, համայնքի համար ներդրումների մատչելիությունը, ծառայություններից, սոցիալական ենթակառուցվածքներից, և իր տարածքի բնական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները, մասնագիտական կրթության և որակավորման բարձրացման դասընթացների մատչելիությունը
- այլ մարմինների հետ փոխհարաբերությունները, մասնավորապես՝ աղքատության հաղթահարման կամ բնական ռեսուրսների կառավարման գործում,
- տեղական համայնքների համար կենսական նշանակության ռեսուրսների պաշտպանության միջոցառումները, ինչպիսիք են ջուրը, բույսերը և այլ կենսաբազմազանությունը,
- համայնքների առողջության և բարեկեցության բարձրացման, հատկապես՝ մշակութային միջոցառումները[40]:

- *MM6. Տեղաբնակների և համայնքների հողօգտագործման ավանդական իրավունքների վերաբերյալ քննարկումների քանակն ու նկարագրությունը.* Հանքարդյունաբերական ձեռնարկությունները մեծ չափով կախված են հողի և բնական այլ ռեսուրսների օգտագործումից: Մյուս կողմից, այդ հողերը և բնական ռեսուրսները տեղաբնակների և ազդակիր համայնքների բնակչության համար կենսական նշանակություն ունեն՝ հաճախ ոչ միայն որպես տնտեսական կենսամիջոցների ապահովման աղբյուր, այլ նաև որպես նրանց հոգևոր, մշակութային և սոցիալական ինքնության հիմք: Այդ պատճառով հողի օտարումն ու բնական ռեսուրսների հասանելիության խոչընդոտները դառնում են ընկերությունների և տեղաբնակների միջև հակադրության աղբյուր, եթե հնարավոր հակասությունները պատշաճ չեն գնահատվում և կառավարվում: Հողերին և այլ բնական ռեսուրսներին տնօրինելու առիթով բախումների գրանցված դեպքերի թիվը տեղեկություն է տալիս ընկերության որդեգրած քաղաքականության մասին և թույլ է տալիս հասկանալ տեղական համայնքների հետ ընկերության փոխհարաբերությունների վիճակը:
- MM7. *Տեղական համայնքների հողօգտագործման և տնօրինման ավանդական իրավունքների խախտման հետ կապված հիմնախնդիրների լուծման մեխանիզմների կիրառումը.* Այս ցուցանիշը ներկայացնում է տեղական բնակչության հետ

[40] Հղումը՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Ստանդարտ 1. Սոցիալական և բնապահպանական ազդեցության գնահատման և կառավարման համակարգեր» (2006)

հարաբերություններում ծագող խնդիրների լուծմանը ընկերության նախապատրաստվածության աստիճանը:

- *ՄՄ8. Ընկերության գործողությունների վայրերի թիվը կամ տեսակարար կշիռը որտեղ փոքրամաշտաբ հանքարդյունահանում է իրականացվում, դրա հետ կապված ռիսկերն ու դրանց մեղմացման և կառավարման միջոցառումները.* Ռիսկերը կարող են կապված լինել ինչպես շրջակա միջավայրի դեգրադացման հետ, այնպես էլ բնակչության առողջության վատթարացման և հողի տնօրինմանն առնչվող բախումների հետ: Ընդ որում փոքրամաշտաբ հանքարդյունահանման տակ հասկանում ենք հետևյալ բնութագրերն ունեցող գործունեությունը. փոքր կամ մարգինալ հանքավայրերի մշակում, կապիտալի ոչ մեծ ներդրումներ, աշխատուժի, հատկապես՝ ձեռքի աշխատանքի ինտենսիվ կիրառում, շուկաների և այլ ենթակառուցվածքների ցածր մատչելիություն, աշխատանքային անվտանգության և առողջապահության ցածր մակարդակ, մեծ էկոլոգիական ազդեցություն:
- *ՄՄ9. Վերաբնակեցման ենթարկված տեղանքների քանակը, վերաբնակեցված տնային տնտեսությունների քանակը և կենսապահովման միջոցների վրա ազդեցությունների նկարագրությունը.* Անկախ վերաբնակեցման կամավոր կամ ոչ կամավոր լինելուց՝ պոտենցիալ ազդեցությունները կարող են հանգեցնել բերրի հողերի կորստին, զբաղվածության և եկամտի կորստին, կացարանի կորստին, հասարակական ռեսուրսների և ծառայությունների մատչելիության կորուստներին, ինչպես նաև կարող են բերել սոցիալական մեկուսացման: Չափանիշն արտացոլում է վերաբնակեցման ենթարկված տնային տնտեսությունների, ընտանիքների և/կամ անհատների քանակը, բնակչության կենսապահովման միջոցների վերականգնումը, այդ թվում՝ կայուն հողօգտագործումը[41]: Հաշվետվության մեջ պետք է ներկայացվեն վերաբնակեցման հետ կապված բոլոր վեճային իրավիճակների դեպքերը և դրանց հաղթահարման լուծումները:
- *ՄՄ10. Գործունեության ավարտման (փակման) պլաններ ունեցող գործողությունների թիվն ու տեսակարար կշիռը.* Այս ցուցանիշը հատկապես կարևորվում է այն պատճառով, որ ձեռնարկության գործունեության՝ ծրագրված կամ չծրագրված փակումը կարող է զգալի բացասական հետևանքներ ունենալ աշխատուժի, հասարակության այլ անդամների, տեղական տնտեսության և շրջակա միջավայրի վրա:

ՏՕ2. Կոռուպցիայի տեսանկյունից ուսումնասիրված տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թիվը և տեսակարար կշիռը. Ընկերության սոցիալական վարկանիշի համար կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պահանջում է մշակել և իրականացնել միջոցառումների համակարգ, որը ուղղված կլինի երկու հիմնական կողմերի՝ ընկերության ներսում աշխատողների և ընկերության բիզնեսի գործընկերների շրջանակներում կոռուպցիայի վերացմանը:

ՏՕ3. Հակակոռուպցիոն քաղաքականության և միջոցառումների վերաբերյալ դասընթացներ անցած ընկերության աշխատողների տեսակարար կշիռը աշխատողների ընդհանուր թվաքանակի մեջ. Հակակոռուպցիոն քաղաքականության մասին ընկերության ներսում իրազեկության բարձրացումը դասընթացների միջոցով դիտվում է որպես հակակոռուպցիոն միջոցառումների համակարգի կարևոր բաղադրատարր:

ՏՕ4. Կոռուպցիայի կոնկրետ դեպքերին ի պատասխան ձեռնարկված միջոցառումները. Կոռուպցիան, հատկապես զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում, մեծ չափով կարող է նպաստել աղքատության խորացմանը, շրջակա միջավայրի վրա ազդեցությանը, մարդու իրավունքների ոտնահարմանը, ժողովրդավարության խախտմանը և այլն: Այս ցուցանիշը ներկայացնում է ընկերության կողմից ձեռնարկված հատուկ միջոցառումները, որոնք իրականացվել են սահմանափակելու կոռուպցիայի կոնկրետ դեպքի հնարավոր ազդեցությունները կամ հետևանքները, ինպես նաև՝ իջեցնելու հետագայում նման դեպքերի ռիսկերը:

[41] Հղումը՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Ստանդարտ 5. Հողի օտարում և ոչ կամավոր տարաբնակեցում» (2006)

SO5. Մասնակցությունը հանրային քաղաքականության ձևավորմանը և զարգացմանը, ինչպես նաև՝ լոբբիստական գործողություններին. Այս ցուցանիշը թույլ է տալիս պատկերացում կազմել այս կամ այն քաղաքական կամ տնտեսական որոշման՝ կապակցությամբ ընկերության առաջնահերթությունների մասին (հատկապես նույն ոլորտի այլ ընկերությունների հետ համեմատությունների միջոցով) և բացահայտել ընկերության ռազմավարությունների համապատասխանությունը կայուն զարգացման հիմնադրույթի պահանջներին: Հաշվետվության մեջ նշվում են քննարկումներին ընկերության պաշտոնական, այդ թվում՝ արհմիությունների միջոցով, մասնակցության և այլ ձևերով արտահայտված դիրքորոշումները այս կամ այն քաղաքական կամ տնտեսական որոշման կապակցությամբ:

SO6. Քաղաքական կուսակցություններին, քաղաքական գործիչներին և քաղաքականության ֆինանսավորման այլ միջնորդ կազմակերպություններին ցուցաբերած ֆինանսական և բնաիրային աջակցության ընդհանուր արժեքային ծավալը. Այս ցուցանիշի նպատակն է՝ արտացոլել հաշվետու հանքարդյունաբերող ընկերության ներգրավվածությունը քաղաքական ուղղությունների ֆինանսավորման գործում և ապահովել ընկերության քաղաքական հարաբերությունների թափանցիկությունը:

SO7. Հակամենաշնորհային, հակատրեստային և մրցակցային շուկայի համար պայքարին ուղղված գործողությունների ընդհանուր թիվը. Մենաշնորհները և արդյունաբերական հսկաները սահմանափակում են սպառողի ընտրության հնարավորությունները, հսկում են գները և այլ գործոնները, որոնք որոշիչ են շուկայի արդյունավետ լինելու առումով: Տնտեսվարող սուբյեկտների միջև բաց մրցակցությունը հանդիսանում է տնտեսական արդյունավետության և կայուն աճի հիմքերից մեկը: Այս ցուցանիշը վերաբերում է այն գործողություններին, որոնք ձեռնարկվել են հանքարդյունահանող ընկերության կողմից ի կատարումն հակամենաշնորհային օրենքի՝ բաց մրցակցային շուկայի խոչնդոտների վերացման և հակամրցակցային վարքի կանխարգելման նպատակով: Հակամրցակցային վարքը ենթադրում է հաշվետու ընկերության կողմից շուկան սահմանափակող գործողությունների՝ գների, մրցութային առաջարկների, արտադրանքի թողարկման ծավալների հսկողություն սահմանելու փորձերը:

SO8. Գործող օրենսդրության խախտումների համար տույժերի դրամական մեծությունը և ոչ դրամական պատժամիջոցների ընդհանուր թիվը. Այս ցուցանիշի նպատակն է՝ բացահայտել հանքարդյունահանող ընկերության օրինապաշտ լինելը: Այն չափազանց կարևոր է ընկերության վստահության վարկանիշի ձևավորման համար, ինչն իր հերթին պետք է որոշիչ լինի դրա՝ գործունեություն ծավալելու կամ ընդլայնվելու լիցենզիայի տրամադրման գործում:

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թափանցիկ կառավարում

Բնական ռեսուրսների շահագործումից ստացվող եկամուտները աշխարհի ավելի քան 50 երկրների համար այսօր հանդիսանում են պետական բյուջեի մուտքերի կարևորագույն աղբյուր: Սակայն, այս ոլորտում ստացվող եկամուտները հաճախ չեն բացահայտվում, որոշ դեպքերում տեղեկությունները համարվում են պետական կամ առևտրային գաղտնիք, իսկ հաշվետվողականության բացակայությունը նպաստում է պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով եկամուտների ապօրինի հապշտակումներին և յուրացումներին:

Հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկությունները ստեղծում են մեծ եկամտային հոսքեր, սակայն հասարակությունը հաճախ դժվարանում է դրանցից օգուտներ քաղել: Այդ հոսքերի վերաբերյալ հասարակության անդամների անտեղյակությունը խոչընդոտում է նրանց մասնակցությունը երկրի զարգացմանն առնչվող տարբեր

որոշումների ընդունման գործընթացներում, ինչպես նաև ազգային հարստության նկատմամբ հասարակական հսկողություն իրականացնելու գործընթացում:

Մյուս կողմից, աշխարհում անընդհատ մեծանում են կայուն հասարակական և տնտեսական զարգացումը խոչընդոտող վտանգներն ու ռիսկերը, և դրանց կառավարման խնդիրն օրեցօր դառնում է ավելի ու ավելի հրատապ: Անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի տնտեսական, բնապահպանական ու սոցիալական ազդեցությունների թափանցիկությունը դառնա ներդրումներ կատարելու մասին որոշումների, շուկայական հարաբերությունների և հասարակության շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների հիմնարար բաղադրիչը: Թափանցիկ կառավարումը մարտահրավեր է հատկապես բնական ռեսուրսների արդյունահանումից էապես կախված երկրներում:

Ի լրումն հանրային իրազեկության բարձրացման՝ հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը նպաստում է նաև ընկերությունների դրական սոցիալական վարկանիշի ձևավորմանը, քանի որ բացահայտում է դրանց պատրաստակամությունը՝ նպաստելու հասարակության անդամների տնտեսական բարեկեցության բարձրացմանը, և մեծացնում է նրանց կողմից կատարված վճարումների՝ կայուն զարգացմանն ուղղված լինելու հավանականությունը:

Ելնելով ընդերքի՝ հանրային բարիք լինելու սկզբունքից, ընդերքօգտագործմանն առնչվող տեղեկատվությունը առնվազն ժողովրդավար երկրներում պետք է լինի հրապարակային: Գաղտնի կարող են լինել միայն փոքրածավալ որոշ տեղեկություններ սահմանափակ ժամանակահատվածում: Հանրության համար մատչելի պետք է լինեն ընդերքօգտագործողների, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման ծավալների, գների, ստացվող եկամուտների, ծախսերի, վճարվող հարկերի, օրինախախտումների և օրինակելի փորձի, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման, հիմքերի և այլնին առնչվող տեղեկությունները: Պետության քաղաքացիների տեղեկացվածությունը պետական եկամուտների ու ծախսերի մասին և մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացներին կնպաստի երկրի կայուն զարգացմանը միտված ճիշտ և իրատեսական ուղիների ընտրությանը:

Հանքարդյունաբերության ճյուղում ստեղծվող դրամական հոսքերի և պետական բյուջեի մուտքերի մասին հասարակության տեղեկացվածությունն ու դրանց կառավարման գործում մասնակցությունը ապահովելու նպատակով աշխարհի շատ երկրներում կիրառվում են նախաձեռնություններ, ինչպիսիք են՝ «Հրապարակի՛ր՝ ինչ մուծում ես» նախաձեռնությունը և «Հանքարդյունաբերության թափանցիկության նախաձեռնություն» ծրագիրը: Միջազգային արդի փորձը և ծավալվող նորանոր նախաձեռնությունները միտված են նրան, որպեսզի մեծացնեն այս ոլորտում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ ընդերքի հարստությունը պատկանում է երկրի բոլոր քաղաքացիներին և պետությունը պարտավոր է ապահովել նրանց իրազեկված լինելու իրավունքը իրենց սեփականության վերաբերյալ:

«Հրապարակի՛ր՝ ինչ մուծում ես» նախաձեռնություն[42]

«Հրապարակի՛ր՝ ինչ մուծում ես»՝ ՀԻՄ (Publish What You Pay - PWYP) նախաձեռնությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գլոբալ ցանց է, որը նպատակաուղղված է ընդերքօգտագործումից մեծ կախվածություն ունեցող երկրների կառավարություններին ստիպելու՝ հաշվետու լինել նավթի, գազի և այլ օգտակար հանածոների արդյունահանումից ստացվող եկամուտների համար՝ հավաստիանալու, որ դրանք ուղղվում են զարգացմանը և հասարակ քաղաքացիների բարեկեցությանը:

[42] Տես՝ http://www.publishwhatyoupay.org

Հանքարդյունաբերական ընկերություններին ուղղված՝ «հրապարակի՛ր՝ ինչ մուծում ես» և կառավարություններին ուղղված՝ «հրապարակի՛ր՝ ինչ ստանում ես» կոչերը բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների կառավարման հաշվետվողականության համակարգին անցնելու առաջին անհրաժեշտ քայլերն են: Ընկերություններից և կառավարությունից ստացված տեղեկատվության հիման վրա հասարակությունը հնարավորություն է ստանում համեմատել այդ երկու դրամական հոսքերը, հսկել օգտակար հանածոների շահագործումից ստացվող եկամուտների արդյունավետ օգտագործումն ու բաշխումը և պահանջել կատարվող ծախսերի հիմնավորումը:

ՀԻՄ-ը համագործակցում է ավելի քան 70 երկրների հասարակական կազմակերպությունների հետ, որոնք պայքարում են հանքարդյունահանման ոլորտի ընկերությունների մուծումների և պետական բյուջեի մուտքերի պարտադիր բացահայտման համար: Այս նախաձեռնությունը նաև կոչ է անում թափանցիկ դարձնել լիցենզիաների տրամադրման և օգտակար հանածոների արդյունահանման պայմանագրերի կնքման գործընթացները: Բացի այդ, այն պահանջում է, որպեսզի բոլոր այն շահագրգիռ կողմերը, որոնք աջակցում կամ ներդրումներ են կատարում հանքարդյունաբերության ոլորտում, պարտավորվեն բարձրացնել ոլորտի թափանցիկությունը: Այդպիսով, ՀԻՄ-ի քարոզչության թիրախ են հանդիսանում նաև ներդրողները, միջազգային ֆինանսական հաստատությունները, տեղական համայնքները, հասարակական կազմակերպությունները և այլ առնչվող խմբեր:

Քանի որ հանքարդյունաբերության ճյուղում թափանցիկության և հաշվետվողականության առաջընթացի գլոբալ շարժումը նոր թափ է ստացել վերջին տարիների ընթացքում՝ կտրուկ աճել է ռեսուրսներից մեծ կախվածություն ունեցող երկրներում ընկերությունների և կառավարության գործունեության թափանցիկությունը պահանջող հասարակական կազմակերպությունների թիվը: Այդ առումով, ձևավորվել է պայմանագրերի կնքման և հարկերի գանձման կարգերի, աուդիտի ու հաշվապահական հաշվառման, միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային քաղաքականությունների վերաբերյալ, ինչպես նաև դրամական միջոցների՝ պետբյուջեից դեպի նպատակակետը փոխանցման ճանապարհին հսկողություն իրականացնելու կարողությունների զարգացման մեծ պահանջարկ: ՀԻՄ նախաձեռնման պահից տեղական և միջազգային կազմակերպությունները համագործակցում են անհրաժեշտ դասընթացների նկատմամբ պահանջարկը բավարարելու ուղղությամբ: Դրանց առանցքային խնդիրներն են՝

- ընկերության մուծումների և պետբյուջեի եկամուտների թափանցիկությունը,
- պետբյուջեի ծախսերի թափանցիկությունը,
- պայմանագրերի և լիցենզիաների տրամադրման գործընթացների թափանցիկությունը:

Հանքարդյունաբերության թափանցիկության նախաձեռնություն[43]

Հանքարդյունաբերության թափանցիկության նախաձեռնությունը՝ ՀԱԹՆ (Extracting Industries Transparency Initiative - EITI) մի ծրագիր է, որի նպատակն է՝ կառավարությունների և ընկերությունների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության մեծացման միջոցով բարելավել հանքարդյունաբերության ոլորտի կառավարումը[44]: Այն մշակվել է՝ օգնելու շահագրգիռ կողմերին պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների միջոցով ուսումնասիրել և գնահատել, թե ընկերությունների կողմից կատարվող մուծումների որ մասն է մուտքագրվում պետական բյուջե: ՀԱԹՆ-ն ունի խորհուրդ և միջազգային քարտուղարություն, որոնք երաշխավորում են ՀԱԹՆ մեթոդաբանությունը միջազգային մակարդակում:

[43] Տես՝ http://eiti.org

Աշխարհի շատ երկրներում արդեն իսկ առկա է շահագրգիռ կողմերի՝ կառավարությունների, հանքարդյունաբերող ընկերությունների, ներդրողների, ֆինանսական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների աջակցությունը ՀԱԹՆ-ին:

ՀԱԹՆ մասնակից երկրները ծրագրի իրականացման արդյունքում կարող են ակնկալել մի շարք օգուտներ, ինչպես օրինակ՝

- *Հասարակության վստահության ուժեղացում.* ՀԱԹՆ իրականացումը վկայում է, որ կառավարությունը լրջորեն է վերաբերվում հանքարդյունաբերության ճյուղում հաշվետվողականությանն ու թափանցիկությանը: Քանի որ ՀԱԹՆ ծրագիրն ունի արտահայտված հակակոռուպցիոն ուղղվածություն, այն ամրապնդում է հասարակության համոզմունքը, որ երկրում ստեղծվել է մի միջավայր, որտեղ «կոռուպցիոն բնույթի վճարները» դժվար է թաքցնել: Հասարակության վստահության աստիճանը կարող է մեծանալ հատկապես այն դեպքում, եթե այս նախաձեռնությամբ նախատեսվող թափանցիկությունն ապահովվի հանքարդյունաբերության ոլորտում պետական ընդհանուր բարեփոխումների շրջանակներում:

  ՀԱԹՆ-ն միջազգային ստանդարտ է և ՀԱԹՆ թեկնածու երկիրը պետք է համապատասխանի թափանցիկությունը բարելավելու մի շարք միջազգայնորեն համաձայնեցված չափանիշների, ինչը պետք է անկախ հսկվի և արդյունքները վավերացվեն: Դա, իր հերթին, կարող է նպաստել հասարակության վստահության ուժեղացմանը:

- *Եկամուտների առավել արդյունավետ հավաքագրում.* Մուծումների, եկամուտների և այլ դրամական հոսքերի նկատմամբ շահագրգիռ կողմերի ուշադրության կենտրոնացման միջոցով ՀԱԹՆ ծրագիրը նպաստում է հանքարդյունահանող ընկերություններից հարկերի առավել լիարժեք հավաքագրմանը՝ նպաստելով պետական բյուջեի եկամուտների մեծացմանը:

- *Ազգային համերաշխության մթնոլորտ.* ՀԱԹՆ ծրագրում իրենց դերակատարումն ունեն բոլոր շահագրգիռ կողմերն, այդ թվում՝ կառավարությունը և նրա լիազորված մարմինները, հանքարդյունաբերության ընկերությունները, մատակարար ձեռնարկությունները, ֆինանսական կազմակերպությունները, ներդրողները և ոչ կառավարական կազմակերպությունները: Այսպիսով, ստեղծվում է համագործակցության մշտապես գործող համակարգ, որը թույլ է տալիս իջեցնել հակադրությունների ռիսկը և նպաստել երկրի քաղաքական և տնտեսական կյանքի կայունությանը, ինչն անգնահատելի է ներդրման բարենպաստ միջավայրի ստեղծման և, ի վերջո, կայուն տնտեսական զարգացման համար:

- *Վարկառուական վարկանիշի բարձրացում.* Ֆինանսական թափանցիկությունը բարենպաստ է անդրադառնում ներքին և արտաքին ներդրումների գրավչության տեսակյունից: Պարբերաբար ներկայացնելով ՀԱԹՆ հաշվետվությունները՝ երկիրը բարձրացնում է իր և հանքարդյունահանող ընկերությունների վարկառուական հուսալիությունը: Երկրի վարկանիշը հիմնվում է կառավարման որակի և վարկային պարտավորությունները կատարելու նրա ունակության վրա: Քանի որ հասարակության տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը դառնում է ավելի հուսալի, մեծանում է ֆինանսական հաստատությունների հնարավորությունները՝ գնահատելու երկրի վարկային հուսալիությունը: Բարելավված հուսալջությունն, իր հերթին, բարձրացնում է երկրի կողմից վարկեր և այլ ֆինանսավորում ձեռք բերելու հավանականությունը, ինչպես նաև՝ իջեցնում այդպիսի ֆինանսավորման արժեքը:

- *Հասարակական հսկողության ուժեղացում.* Այն դեպքում, երբ տարբեր պետական մարմիններին մուծված գումարները հստակ սահմանված են և հայտնի հասարակությանը, հնարավոր է լինում ավելի լավ կազմակերպել պետբյուջեի ծախսման ուղղությունների հաշվետվողականությունը: Պետբյուջեի հսկողությունն այն կարևորագույն գործառույթներից է, որը կարող է լրացնել ՀԱԹՆ ծրագիրը և որը

հնարավոր չէ իրականացնել՝ առանց եկամուտների մասին հավաստի տեղեկատվություն ունենալու:

- *Կորպորատիվ ռիսկի կառավարում.* ՀԱԹՆ-ը կարող է նպաստել հանքարդյունաբերական ընկերությունների համար տնտեսվարման ռիսկերի իջեցմանը շահագործման ցածր ընթացիկ ծախսերի առումով: Ազնվորեն ներկայացնելով տվյալներ, թե ինչքան է մուծվել պետբյուջե և ինչքան՝ տեղական բյուջեներ, ընկերությունը փաստորեն տեղեկացնում է այն օգուտների մասին, որ ստացել է իր գործունեությունից: Սա իր հերթին բարձրացնում է ներդրումների գրավչությունը, ինչը բխում է կորպորատիվ շահերից: Իսկ կորպորատիվ ռիսկերի հաջող կառավարումը փոխադարձ շահավետ է ինչպես ընկերությունների համար, այնպես էլ երկրի ողջ տնտեսության համար:

- *Ֆինանսական տեղեկատվության համակենտրոնացում.* Մուծումների և եկամուտների մասին տեղեկատվությունը հաճախ ցրված է լինում անհամադրելի աղբյուրներում և առկա չէ կամ չի ներկայացվում լայն հասարակայնության համար մատչելի ձևով: ՀԱԹՆ ծրագիրն ապահովում է տեղեկատվության մեկ տեղում հավաքագրման արդյունավետ մեխանիզմ՝ հավաստելով տվյալների հուսալիությունը և տալով դրա հստակ մեկնաբանությունը:

- *Այլ ոլորտների թափանցիկություն.* ՀԱԹՆ ծրագրի իրականացման միջազգային փորձը վկայում է, որ չնայած այն իրականացվում է մեկ կոնկրետ ոլորտում, այն հաճախ նպաստում է տնտեսության և հասարակական կյանքի այլ ոլորտների թափանցիկությանն ու հաշվետվողականությանը, ինչպես նաև խրախուսում է հանքարդյունաբերության ոլորտի այլ նախաձեռնություններ: ՀԱԹՆ-ը հաճախ հանդիսանում է առաջին քայլը ընդերքի ռեսուրսների արդյունահանման և օգտագործման թափանցիկության և հաշվետվողականության միջավայրի ստեղծման գործում:

- *Կառավարման բարեփոխումների շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն.* Փորձը վկայում է, որ չնայած ՀԱԹՆ-ը մեծ օգուտներ է խոստանում որպես առանձին նախաձեռնություն, ՀԱԹՆ ծրագիրն առավել օգտակար է լինում այն դեպքերում, երբ ընդգրկված է լինում բնական ռեսուրսների կառավարման բարեփոխումների ընդհանուր փաթեթում՝ հատկապես զուգակցվելով այնպիսի նախաձեռնություններով, ինչպիսիք են՝ բյուջեի խիստ հսկողությունը, հակակոռուպցիոն ռազմավարության մշակումն ու իրականացումը, հանքարդյունաբերական ընկերությունների կառավարման բարելավումը (սկսած հանքահանման լիցենզիաների թափանցիկ տրամադրումից մինչև շահագործողների արդյունավետ աջակցությունն ու հսկողությունը):

ՀԱԹՆ չափանիշներ

ՀԱԹՆ ծրագիրն իրականացնելու համար պետք է ապահովվեն ՀԱԹՆ հետևյալ չափանիշները.

1. Հանքարդյունաբերական ընկերությունների մուծումները պետբյուջե («մուծումներ») և այդ ընկերություններից պետբյուջե ստացված մուտքերը («եկամուտներ») պարբերաբար հրապարակվում են պարզ և հասկանալի տեսքով:
2. Մուծումներն ու եկամուտները ենթարկվում են հուսալի, անկախ և միջազգային աուդիտորական ստանդարտներին համապատասխանող աուդիտի: Այդ ստանդարտները համապատասխան լիցենզավորում ունեցող մասնագիտացված աուդիտորական և հաշվապահական ընկերությունների կողմից կիրառվում են տարբեր երկրներում տեղական օրենքներին կամ իրենց մասնագիտական պարտավորություններին համապատասխան:
3. Մուծումներն ու եկամուտները ստուգվում և համեմատվում են վստահելի և անկախ վարչարարի կողմից, որը կիրառում է միջազգային աուդիտորական ստանդարտները և հրապարակում իր կարծիքը ստուգումների արդյունքների, այդ թվում՝ անհամապատասխանությունների մասին, եթե այդպիսիք հայտնաբերվում են:

4. Մուծումների բացահայտման պարտականությունը վերաբերում է տվյալ երկրում գործունեություն ծավալած բոլոր հանքարդյունաբերական ընկերություններին՝ անկախ նրանց սեփականության ձևից:
5. Հասարակությունն ակտիվորեն մասնակցում է ՀԱԹՆ գործընթացի նախապատրաստմանը, հսկողությանը և գնահատմանը:
6. ՀԱԹՆ իրականացման աշխատանքային պլանը, այդ թվում՝ չափելի թիրախները, կատարման ժամանակացույցը, ինչպես նաև իրականացման հնարավորությունների գնահատումը կամ դրանց հետ կապված հնարավոր խնդիրները, մշակվում են կառավարության կամ նրա լիազոր մարմնի կողմից, անհրաժեշտության դեպքում՝ միջազգային ֆինանսական հաստատությունների աջակցությամբ:

Շահագրգիռ կողմեր

ՀԱԹՆ հիմնական սկզբունքներից է այն, որ ծրագիրն իրականացվում է բազմակողմ, այն է՝ բազմաթիվ շահագրգիռ կողմերի, մասնակցությամբ: Դա նշանակում է, որ բոլոր շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ հանքարդյունահանող ընկերությունները և հասարակական կազմակերպությունները, ոչ միայն մասնակցում են խորհրդակցության կարգով, այլև ակտիվորեն ընդգրկվում են ծրագրի կազմակերպման, հսկողության և կառավարման գործընթացներում: Այս սկզբունքը համարվում է հիմնադրույթային և արտացոլված է ՀԱԹՆ միջազգային կառավարման կառուցվածքում: Փորձը ցույց է տալիս, որ առանց այս սկզբունքի խիստ պահպանման ՀԱԹՆ-ը չի կարող պսակվել հաջողությամբ:

ՀԱԹՆ գործընթացում սովորաբար ընդգրկված են լինում հետևյալ շահագրգիռ կողմերը.

- պետական կամ հասարակական կառույցները, ներառյալ՝ բնական ռեսուրսների կառավարման մարմինները, ֆինանսական հոսքերի հավաքագրման և մուտքագրման կառույցները, տնտեսական զարգացման, պլանավորման և մասնավոր հատվածի հետ կապեր ապահովող կառույցները, տեղական ինքնակառավարման մարմինները, օրենսդիր մարմինները, վերադաս աուդիտորական հաստատությունները, պետական հանքարդյունահանող ընկերությունները
- մասնավոր հատվածը, ներառյալ՝ երկրում գործող հանքարդյունահանող (այդ թվում՝ արտասահմանյան պետական, արտասահմանյան մասնավոր, տեղական մասնավոր) ընկերությունները, ներդրողները, բիզնեսի և արդյունաբերական միավորումները
- ոչ կառավարական կազմակերպությունները, ներառյալ՝ տեղական հասարակական կազմակերպությունները, միջազգային հասարակական կազմակերպությունները և դրանց տեղական մասնաճյուղերը, համայնքային կազմակերպությունները, մամուլը, արհմիությունները, գիտական և կրթական հաստատությունները, կրոնական կազմակերպությունները:

ՀԱԹՆ գործընթացին աջակցելու նպատակով ներգրավվում են կազմակերպություններ՝ տվյալների ստուգում-համեմատություն իրականացնող վարչարարը կամ աուդիտորը, այլ միջազգային գործընկերներ, ՀԱԹՆ խորհուրդը և միջազգային քարտուղարությունը, միջազգային զարգացման և համագործակցության հաստատությունները (Միջազգային արժութային հիմնադրամ, Համաշխարհային բանկ, տարածաշրջանային զարգացման բանկեր և այլն), երկկողմանի դոնոր գործակալությունները:

Չնայած որ ՀԱԹՆ ներառում է բազմաթիվ շահագրգիռ կողմեր՝ դրա իրականացման շարժիչ ուժը կառավարությունն է: ՀԱԹՆ գործընթացին միանալուն ուղղված միջոցառումներ իրականացնելուն զուգահեռ կառավարությունը պետք է՝

- ապահովի քաղաքական ղեկավար դեր և աջակցություն. բոլոր երկրներում կառավարություններն ապահովում են այսպիսի դեր և տրամադրում միջոցներ ու

ռեսուրսներ (քարտուղարություն, իրականացնող ստորաբաժանումներ՝ շահագրգիռ կողմերի հսկող խմբերին աջակցելու և աշխատանքային պլաններ կազմելու համար)
- ապահովի օրենսդրական դաշտ. որոշ երկրներում գոյություն ունեն պայմանագրային կամ օրենսդրական խոչընդոտներ, որոնք ազդում են ՀԱԹՆ իրականացման վրա, ինչի հետևանքով պահանջվում են նոր կամ փոփոխված օրենսդրություն կամ այլ իրավական կարգավորող ակտեր, օրինակ՝ ՀԱԹՆ առնչվող տվյալների հրապարակման թույլտվություն և այլն
- բացահայտի պետական եկամուտների մանրամասները. կառավարությունից պահանջվում է տրամադրել հանքարդյունահանող ձեռնարկություններից ստացված եկամուտների մասին տվյալները, ինչպես նաև հավաստել այդ տվյալների հուսալիությունը:

Հանքարդյունահանող ընկերությունների և հասարակական կազմակերպությունների մասնակցության աստիճանը որոշվում է շահագրգիռ կողմերի քննարկումների հիման վրա: Բոլոր դեպքերում դրանք պետք է՝

- նպաստեն ՀԱԹՆ գործընթացը սկսելուն և ղեկավարելուն. հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև՝ հանքարդյունաբերական ընկերությունները (չնայած դրանց միջև հարաբերությունները կարող են բարդ լինել) հանդես են գալիս որպես նախաձեռնողներ և ստիպում կառավարությանը սկսել գործընթացը
- օգնեն ձևավորել ՀԱԹՆ շրջանակները՝ ընդգրկվելով ՀԱԹՆ ղեկավար խմբի մեջ
- մասնակցեն մուծումների և եկամուտների մասին տվյալների համեմատությանն ու աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրությանը
- ամփոփեն և քննարկեն ՀԱԹՆ արդյունքները
- տարածեն ՀԱԹՆ փորձը, նախաձեռնեն միջոցառումներ, կոնֆերանսներ, գործընթացի առաջընթացի մասին տեղեկատվությամբ հանդես գան լրատվամիջոցներում և այլ լսարաններում:

Անհրաժեշտ միջոցառումներ

Եթե կառավարությունը որոշում է կայացնում ձեռնամուխ լինել ՀԱԹՆ իրականացմանը, այն պետք է ձեռնարկի կոնկրետ քայլեր նշված չափանիշներին բավարարելու ուղղությամբ: Առաջին հերթին այն պետք է՝

- հրապարակի ՀԱԹՆ իրականացնելու իր մտադրության մասին հայտարարագիր,
- արտահայտի ՀԱԹՆ իրագործման ուղղությամբ հանքարդյունաբերական ընկերությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելու պատրաստակամություն
- նշանակի ՀԱԹՆ իրականացման համար պատասխանատու անձ,
- հրապարակի աշխատանքային պլան՝ չափելի թիրախներով և կատարման ժամանակացույցով, որը համաձայնեցված կլինի բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Ներկայումս գործող ՀԱԹՆ խորհրդի կանոնների համաձայն՝ նշված քայլերի հաջող ավարտման դեպքում երկիրը կընդգրկվի «թեկնածու» երկրների ցուցակում:

ՀԱԹՆ առաջնահերթ քայլերից պետք է լինի նաև ՀԱԹՆ գործընթացի գործողությունների շրջանակի մասին առանցքային որոշումների ընդունումը, այսինքն այն, թե ինչ տեղեկատվություն պետք է ընդգրկված և բացահայտված լինի ՀԱԹՆ ներքո: Կարևորագույն շրջանակային հարցերն են.

- *<u>Տվյալների ստուգման-համեմատման կամ աուդիտի գործընթաց.</u>* ՀԱԹՆ չափանիշը պահանջում է, որ մուծումների և եկամուտների ստուգում-համեմատումը և հրապարակումը կատարվեն ընդունված միջազգային աուդիտորական ստանդարտներին համապատասխան (այսինքն իրականացվի պատշաճ լիցենզավորում ունեցող աուդիտորական ընկերության կողմից), որը կերաշխավորի ՀԱԹՆ տվյալների հուսալիությունը: Ներկայումս գոյություն ունի ՀԱԹՆ հաշվետվությունների ստուգման-համեմատման մի քանի տարբերակ՝ սկսած

նրանից, որ ընկերության հաշվապահը միջազգային ստանդարտներով կազմված ֆինանսական հաշվեկշիռների հիման վրա լրացնում և ներկայացնում է ՀԱԹՆ տվյալների ձևաչափը, իսկ վարչարարը ստուգում է դրանց համապատասխանությունը, մինչև այն մոդելը, երբ աուդիտորական կազմակերպությունն իրականացնում է այս գործընթացում ընդգրկված բոլոր ընկերությունների և պետական մարմինների կողմից կազմված հաշվետվությունների աուդիտ և միջազգային ստանդարտներին համապատասխան ներկայացնում աուդիտորական եզրակացություն: Վերջին դեպքում ՀԱԹՆ տվյալները ստուգվում են հիմնովին, ապահովվում է մուծումների և եկամուտների հավաստիությունը և դրանց պայմանագրային ճշգրտությունն ու լիարժեքությունը, ինչպես նաև ստուգվում են ակտիվներն ու դրամական հոսքերը: Դա հնարավորություն է տալիս ոչ միայն պատկերացում կազմել, թե ինչ մուծումներ և եկամուտներ են ընդգրկված հաշվետվության մեջ, այլև հասկանալ՝ մուծում են արդյոք հանքարդյունաբերական ընկերությունները այն ամենը, ինչ պարտավոր են պայմանագրերի համաձայն, թե ոչ: Այս մոդելները պահանջում են հետևյալ տիպերի ընդլայնված աուդիտի իրականացում.

- *Ֆիզիկական աուդիտ,* որը հաշվառում է հանքարդյունահանման փաստացի թողարկման ֆիզիկական ծավալն ու որակը արտադրության, մշակման և փոխադրումների տարբեր փուլերում: Աուդիտի այս տեսակը արդյունավետ է, երբ կասկածներ կան, որ փաստացի թողարկման ծավալները ավելի մեծ են, քան հաշվետվության մեջ ընդգրկված և հարկվող ծավալները: Այսպիսի աուդիտը կարևոր է նաև հասկանալու համար, թե որտեղ են տեղի ունենում թողարկման ծավալների կորուստները (օրինակ՝ հաճախ փոխադրումների կամ հարստացման ենթակառուցվածք մուտք գործած հանքանյութի քանակությունը ցածր է փաստացի արդյունահանվածից): Ուսումնասիրվում է նաև, թե որտեղ է թողարկված արտադրանքի որակը ենթարկվում փոփոխության կամ ներկայացվում ոչ ճիշտ (հանքաքարի մեջ օգտակար հանքանյութի պարունակության աստիճանը կարող է չափազանցվել կամ թերագնահատվել, բարձորակ հանքանյութը կարող է խառնվել ցածր որակի հետ և այլն):
- *Գործընթացային աուդիտ,* որը կիրառվում է հետևելու համար, թե ինչպես են մուծումները հավաքագրվում, մուծվում և վերաբաշխվում: Այսպիսի աուդիտը նաև կարևոր է, քանի որ մուծումների հավաքագրման համակարգի ոչ ճիշտ գործելու դեպքում պետական եկամուտների մի մասը կարող է չհասնել պետբյուջե: Բացի այդ, եթե եկամուտները հավաքագրվում են ոչ կենտրոնական բանկի կողմից, այլ որևէ այլ միջնորդ ֆինանսական հաստատության կամ գործակալության կողմից, ապա այդ գործակալությունը կարող է հավաքագրման գործընթացից շահույթներ ունենալ՝ ուշացնելով գումարների փոխանցումը կենտրոնական բանկին: Վերջինիս փոխանցման ձգձգումը թույլ է տալիս միջնորդ գործակալությանը կարճ ժամանակահատվածում հանքանյութի գների մի քանի տոկոսային կետերով անընդհատ տատանման, ինչպես նաև արտարժույթի փոխանակման փոխարժեքների տատանման հաշվին ունենալ չհսկվող լրացուցիչ օգուտներ: Նման պրակտիկան երկրում ստեղծում է ստվերային տնտեսության ծաղկման հնարավորություն:
- *Պայմանագրային աուդիտ,* որն իրականացվում է այն դեպքերում, երբ հանքավայրերի նկատմամբ կիրառվում են տարբերակված ֆինանսական պարտավորություններ՝ կախված դրանց ծախսերից, ռիսկերից ու բարդություններից, և անհրաժեշտ է լինում պարզել, թե արդյոք ընկերությունները արտադրության ծավալների ճիշտ քանակություն են ներկայացնում և պատշաճ չափով հարկեր են մուծում:

Այն դեպքերում, երբ կասկածներ կան, որ բնական ռեսուրսների ծավալները ուղղակի խարդախությունների առարկա են, ավելի նպատակահարմար է իրականացնել ֆիզիկական աուդիտ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հանքարդյունահանման ճյուղում կոռուպցիան և խարդախությունը ավելի շուտ դրսևորվում են դրամական խարդախությունների տեսքով, ինչպիսիք են օրինակ՝ ծախսերի չարդարացված ուռճացումը, ընկերության ներսում տրանսֆերտային

գները, դուստր ձեռնարկություններին և գործընկեր կազմակերպություններին շուկայականից ցածր գներով վաճառքը և այլն: Այս դեպքում ավելի կիրառելի են գործընթացային աուդիտը կամ պայմանագրային աուդիտը: Երկարաժամկետ հեռանկարում ցանկալի է նաև ընդլայնել եկամուտների հավաքագրման մարմինների լիազորությունները՝ ավելի մանրակրկիտ ուսումնասիրելու և ստուգելու հանքարդյունաբերական ընկերությունների ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը պայմանագրային և հարկային պարտավորություններին:

- *Ընկերության մասնակցությունը կամ մուծումների մակարդակը.* Կարելի է սահմանել այն ընկերությունների շրջանակը, որոնք պետք է ընդգրկվեն ՀԱԹՆ գործընթացում: Այդ շրջանակը կարող է ընդգրկել բոլոր հանքարդյունահանող ընկերություններին: Կարող է նաև սահմանվել մուծումների շեմ, որից ցածր վճարող և պետբյուջեում աննշան մուտքեր ունեցող ընկերությունների տվյալները չեն արտացոլվի ՀԱԹՆ հաշվետվության մեջ:

- *Բացահայտվող տվյալների ընդգրկման աստիճանը*. Սա ներառում է վերջնական ՀԱԹՆ հաշվետվության մեջ արտացոլվող մանրամասների շրջանակը: ՀԱԹՆ ընտրված շրջանակներից կախված հանքարդյունահանող ընկերությունը տրամադրում է տվյալներ մուծումների մասին, վկայական այն մասին, որ ներկայացված տվյալները քաղված են միջազգային ստանդարտներին համապատասխան աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվեկշիռներից, անհամապատասխանությունների դեպքում՝ բացատրագիր, ինչպես նաև այլ լրացուցիչ մանրամասներ կամ հնարավորություն՝ ծանոթանալու ֆինանսական փաստաթղթերին:

- *Սոցիալական/համայնքային մուծումների առկայությունը.* Հանքարդյունաբերությունը հաճախ ունենում է ուղղակի և անուղղակի մեծ ազդեցություններ համայնքների վրա, օրինակ՝ ենթաակառուցվածքներից (ճանապարհներից, երկաթգծից և այլն) օգտվելու ժամանակ: Հետևաբար, նպատակահարմար է, որ հանքարդյունահանող ընկերությունները մուծումներ կատարեն տեղական բյուջեներին, կամ ստացվող եկամուտների մի մասը վերաբաշխվի կենտրոնից դեպի ընկերության գործողությունների վայր՝ տեղական ինքնակառավարման մարմիններ: Պետբյուջե մուտք գործող կենտրոնացված եկամուտները որպես կանոն անտարբերակելի են, և դրանցում դժվար է առանձնացնել հանքարդյունաբերությունից ստացվող եկամուտները: Մուծումներ կատարելով (կամ վերաբաշխելով) տեղական բյուջեներին՝ շատ ավելի հեշտ կլինի բացահայտել այդ կապը: Եթե մուծումներ են կատարվում տեղական բյուջեներին, ապա ՀԱԹՆ շրջանակները պետք է ընդգրկեն նաև այդ մուծումները:

  Տեղական բյուջեներին կատարվող մուծումների եղանակները սովորաբար հետևյալն են.
  - *Պետբյուջեից կատարվող կամայական փոխանցումներ կամ նախագծեր,* երբ կառավարությունը ժամանակ առ ժամանակ, այսինքն՝ անկանոն հաճախականությամբ և չֆիքսված չափով, փոխանցումներ է կատարում պետբյուջեից տեղական բյուջեներին կամ սոցիալական ուղղվածության որոշ նախագծեր է իրականացնում ազդակիր համայնքներում:
  - *Հանքարդյունահանող ընկերությունների պարտադիր մուծումներ,* երբ օրենքի ուժով կամ պայմանագրային հիմքերով ընկերություններից պահանջվում է նպատակային մուծումներ կատարել անմիջապես տեղական բյուջեներ, օրինակ՝ ճանապարհների հարկեր կամ հողերի վարձակալության վարձ վճարել իրենց գործունեության իրականացման վայրում:
  - *Պարտադիր մուծումներ պետբյուջեից,* երբ օրենքների կամ այլ իրավական նորմերի համաձայն հանքարդյունաբերական ընկերությունների հարկերով համալրված պետբյուջեից որոշակի ֆիքսված տոկոսի չափով գումար է փոխանցվում տեղական բյուջեներին:

- *Այլ ճյուղերի կամ ոչ արտադրական ոլորտների ընդգրկումը.* ՀԱԹՆ ծրագրի իրագործումն առավել արդյունավետ է լինում այն դեպքում, երբ թափանցիկությունն

ու հաշվետվողականությունը, բացի ընդերքօգտագործման ոլորտից, իրականացվում է նաև այլ բնական ռեսուրսների շահագործմանն առնչվող ճյուղերում (օրինակ՝ անտառտնտեսություն) և ունի շարունակական և ոչ թե ժամանակավոր բնույթ:

Քանի որ ՀԱԹՆ-ն ակնկալում է բոլոր հանքարդյունահանող ընկերությունների մասնակցություն և նրանց կողմից կատարվող բոլոր ֆինանսական մուծումների բացահայտում, անհրաժեշտ է, որ այն դիտվի որպես ազգային պարտադիր նախաձեռնություն: Այդ առումով, նախաձեռնության մեջ ընդգրկված բոլոր կողմերի համար հստակ խաղի կանոններ ապահովելու նպատակով հնարավոր է նոր օրենքներ ու իրավական այլ ակտեր ընդունելու կամ եղածները փոփոխելու անհրաժեշտությունը: Իրավական հիմքերը պարտադիր պետք է՝

- սահմանեն հիմնական սկզբունքները, ինչպիսիք են՝ հանքարդյունահանող ընկերությունների մուծումների ու պետբյուջեի մուտքերի թափանցիկությունը և բազմակողմանի վերահսկողության կարևորությունը
- ամրագրեն կոնկրետ պետական մարմնի կամ ղեկավար խմբի պատասխանատվությունը՝ ՀԱԹՆ գործընթացի խթանման և կազմակերպման գործում
- նախատեսեն առանձին տող պետական բյուջեում ՀԱԹՆ գործողությունների համար
- վերացնեն պայմանագրերում տեղ գտած հանքարդյունաբերող ընկերությունների գործունեության գաղտնիություն ապահովող այն պայմանները, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ տվյալների բացահայտման համար
- ապահովեն ՀԱԹՆ հաշվետվության տվյալների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին
- պարտադիր դարձնեն բոլոր հանքարդյունահանող ընկերությունների մասնակցությունը նախաձեռնությանը
- ապահովեն անկախ վարչարարի կամ աուդիտորի նշանակումը ազմակողմ ղեկավար մարմնի կողմից և նրա համար ընկերությունների ֆինանսական փաստաթղթերի մատչելիությունը
- ամրագրեն վարչարարի կամ աուդիտորի գործողությունների շրջանակները (ստացված տվյալների պարզ ստուգում-համեմատումից մինչև ավելի ինտենսիվ կամ ամբողջական աուդիտի իրականացում)՝ սահմանելով վերջնական հաշվետվության հրապարակման կարգը և դրանում տվյալների մանրամասնության աստիճանը:

Պետբյուջեի մուտքերի մասին կառավարության կողմից տրամադրվող տվյալների տիպն ու ծավալները կարող են տարբերվել՝ կախված ՀԱԹՆ ծրագրի շրջանակներից: «Միայն համեմատելու» տարբերակի դեպքում, որպես կանոն, հարկային մարմինը անկախ վարչարարին տրամադրում է բոլոր հանքարդյունահանող ընկերություններից պետական մարմիններին ներկայացված հաշվետվությունները: Կառավարության կողմից և հանքարդյունաբերական ընկերության կողմից տրամադրված տվյալների միջև վարչարարի կողմից հայտնաբերված ցանկացած անհամապատասխանություն պարզաբանվում է երկու կողմերի հետ քննարկման միջոցով:

Հաշվետվությանը ներկայացվող պահանջներից ամենահիմնականը՝ դրա հասկանալի լինելն է: Մեկ այլ կարևոր պահանջ է վարչարարի/աուդիտորի կողմից ՀԱԹՆ հաշվետվության միջազգային ստանդարտների կիրառումը: Իսկ մուծումների և եկամուտների տվյալներն իրենց հերթին նույնպես պետք է ենթարկված լինեն միջազգային ստանդարտներին համապատասխանող աուդիտի:

ՀԱԹՆ ծրագիրը նախատեսում է նաև շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացում, մասնավորապես, կառավարության, հանքարդյունաբերող ընկերությունների և հասարակական կազմակերպությունների համար ՀԱԹՆ հատուկ դասընթացների կազմակերպում և ուղեցույցների տրամադրում:

Արդյունքների քննարկումն ու տարածումը

ՀԱԹՆ գործընթացի նպատակն է ոչ միայն մուծումների և եկամուտների մասին տեղեկատվության հավաքագրումը, այլև ՀԱԹՆ ծրագրի և նրա արդյունքների մասին քաղաքացիներին պարզ և մատչելի տեղեկատվության տրամադրումը: Այդ առումով, ՀԱԹՆ մասին տեղեկատվության տարածման ռազմավարություններն ու գործիքները ևս գտնվում են բազմակողմ ղեկավար խմբի ուշադրության կենտրոնում: ՀԱԹՆ կարևորագույն փաստաթղթերը, այդ թվում՝ բազմակողմ ղեկավար խմբի կազմն ու աշխատանքային պարտականությունները, փոխըմբռնման հուշագրերը, աշխատանքային պլանը և այլն, նույնպես տրամադրվում են լայն հասարակայնությանը:

ՀԱԹՆ հաշվետվությունները հանրությանը պետք է ներկայացվեն մատչելի՝ պարզ և հասկանալի տեսքով, հաշվետվության բովանդակությունը ամփոփող մատչելի դիագրամների և աղյուսակների օգնությամբ՝ միևնույն ժամանակ խուսափելով գերպարզեցումից:

Անհրաժեշտ է իրականացնել ՀԱԹՆ ծրագրի մոնիթորինգ և արդյունքների ու ազդեցությունների գնահատում՝ համոզվելու, որ ծրագիրը ճիշտ ուղու վրա է և, ի վերջո, ապահովելու է սպասվող արդյունքները: Մոնիթորինգի և գնահատման գործընթացի սկզբնակետը շահագրգիռ խմբերի կողմից կազմված և համաձայնեցված աշխատանքային պլանն է: Մոնիթորինգը և գնահատումը սովորաբար իրականացվում են ՀԱԹՆ քարտուղարության կամ այդ նպատակի համար հրավիրված անկախ խորհրդատուի կողմից:

ՀԱԹՆ իրականացման գործում չափազանց կարևոր դեր են խաղում միջազգային ՀԱԹՆ կառույցները՝ ընդհանուր վերահսկման, երկրներին աջակցության, ընդգրկված կազմակերպություններին և անհատներին խորհուրդներ և ռեսուրսներ տրամադրելու, ինչպես նաև ՀԱԹՆ փորձը տարածելու և քաղաքականությունը համաձայնեցնելու նպատակով շահագրգիռ կողմերին միավորելու ուղղությամբ: ՀԱԹՆ-ի մեջ ընդգրկված երկիրը ոչ միայն իրականացնում է ազգային մակարդակի գործընթացը, այլև դառնում է ՀԱԹՆ քարտուղարության գլոբալ նախաձեռնության մի մասը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. С.Н.Бобылев, А.Ш. Ходжаев „Экономика природопользования“ (MSրՍՉՈ, 1997)
2. J.R Kahn, *The Economic Approach to Environmental and Natural Resources* (Orlando, The Dryden Press, 1998)
3. R. Repetto, *Wasting Assets: Natural Resources in the National Income and Product Accounts* (Washington, World Resources Institute, 1989)
4. H. E. Daly, *The Economics of Biophisical Equilibrium and Moral Growth* (San Francisco, Freeman, 1977)
5. H.M. Peskin, „A National Accounting Framework for Environmental Assets,“ *Journal of Environmental Economics and Management*, Issue 2 (1976)
6. http://www.icmm.com.
7. http://www.icmm.com/our-work/sustainable-development-framework/10-principles.
8. http://www.accountability.org/standards/index.html
9. http://www.accountability.org
10. http://www.sustainabilityatwork.org.uk/strategy/report/0
11. http://www.sustainabilityatwork.org.uk
12. http://www.fairlabor.org
13. http://www.goodcorporation.com/good-corporation-standard.php
14. http://www.goodcorporation.com
15. http://www.sa-intl.org/index.cfm?fuseaction=Page.ViewPage&PageID=937
16. http://www.sa-intl.org
17. http://www.iso14000-iso14001-environmental-management.com
18. http://www.iso.org/iso/home.html
19. http://www.unctad.org/Templates/StartPage.asp?intItemID=2531&lang=1
20. http://www.unglobalcompact.org
21. http://www.unglobalcompact.org/docs/communication_on_progress/Tools_and_Publications/Practical_Guide_2008.pdf
22. http://www.globalreporting.org
23. http://www.publishwhatyoupay.org
24. http://eiti.org